

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

ԵՐԵՎԱՆ



2014

Գիտական խմբագիր՝ Վահրամ Շահինյան,

ՀՀ հայրուկ քննչական ծառայության պետ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան

Հեղինակներ՝

Կարեն Կարապետյան, *ՀՀ հայրուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի պետ,*

Գրիգոր Ամիրջյան, *ՀՀ հայրուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,*

Տիգրան Խաչիկյան, *ՀՀ հայրուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի գլխավոր մասնագետ*

ՀՏԴ 343(479.25)

ԳՄԴ 67.99(2Հ)8

Խ 727

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
Խ 727 ՈՒՂԵՑՈՒՑՑ.-ԵՐ.: ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, 2014.- 132 էջ:

Սույն ուղեցույցը վերաբերում է խոշտանգման վերաբերյալ քրեական գործերի քննության կազմակերպմանը և իրականացմանը, խոշտանգման հասկացությանը և էությունը, խոշտանգման գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումների վերլուծությանը, խոշտանգման գործերով նախաքննություն իրականացնելիս Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից ներկայացվող պահանջների էության բացահայտմանը:

Նախատեսված է ՀՀ-ում նախաքննություն իրականացնող մարմինների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, ասպիրանտների համար: Կարող է օգտակար լինել դատական-դատախազական աշխատողների, քրեական և քրեադատավարական իրավունքի հարցերով հետաքրքրվող քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների համար:

ՀՏԴ 343(479.25)

ԳՄԴ 67.99(2Հ)8

ISBN 978-99941-0-575-5

© ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2014

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	4
§ 1. Խոշտանգում: Հասկացությունը, էությունը	8
§2. Խոշտանգման գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներ	13
§3. Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից ներկայացվող պահանջները խոշտանգման գործերով նախաքննություն իրականացնելիս	26

ԱՌԱՋԱԲԱՆ

«Քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված որոշ իրարամերժ մեկնաբանումներ հարուցող, «Կողմից վավերացված կոնվենցիոնալ չափանիշներին չհամապատասխանող առանձին հանցակազմերի առկայությունն օբյեկտիվորեն պահանջում է այդ տեսակի հանցագործությունների վերաբերյալ գործերի նախաքննությունն իրականացնելիս նկատի ունենալ որոշակի կողմնորոշիչ իրավական ելակետեր, որոնցով ղեկավարվելու պարագայում Հայաստանի Հանրապետության դատաիրավական իրականությունում կձևավորվի հնարավորինս միասնական և միջազգային չափանիշներին համահունչ իրավակիրառական պրակտիկա:

Սույն վերլուծության շրջանակներում փորձ է արվել «Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խոչտանգման հանցակազմը դիտարկել ՄԱԿ-ի «Խոչտանգումների եվ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած դիրքորոշումներով այս հանցակազմի տարրերին ներկայացվող պահանջների լույսի ներքո և դրանով պայմանավորված՝ քննարկվող հանցագործությունների վերաբերյալ գործերի քննություն իրականացնող պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրել քննչական աշխատանքի կազմակերպման կատարելագործման որոշակի ուղղությունների վրա:

Ուղեցույցի հրապարակման անհրաժեշտությունը բխում է քննչական պրակտիկայում խոչտանգման հետ կապված քրեական գործերի քննության ընթացքում հաճախակի առա-

ջացող փակուղային իրավիճակների կամ օբյեկտիվորեն ծագող առանձին հարցադրումների շուրջ անհրաժեշտ գիտագործնական մեկնաբանություններ տալու հրամայականով, ինչը, կարծում ենք, բավական արդյունավետ կլինի քննչական աշխատանքների կազմակերպման որակի, հնարավորության սահմաններում քննության մեթոդիկայի միասնականացման իմաստով:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրանով, ըստ էության, ապահովվել է տեսություն-պրակտիկա կապի ներդաշնակություն. վերլուծվել են ինչպես խոշտանգման հանցակազմն ինքնին, դրա ձևակերպման համապատասխանությունը ՄԱԿ-ի «խոշտանգումների եվ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. դեկտեմբերի 10-ի ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիային, այնպես էլ դրա շուրջ ձևավորած նախադեպային պրակտիկան թե՛ ՀՀ Վճռաբեկ դատարանի, թե՛ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Բացի այդ, աշխատանքում արվել են նաև կոնկրետ-որոշակի առաջարկներ, որոնց պահպանումը քննարկվող հանցատեսակին վերաբերող քրեական գործերի քննության ընթացքում, մեր համոզմամբ, մի նոր իրավական խարիսխ կլինի որակյալ քննչական աշխատանք ապահովելու գործում:

Սույն աշխատանքի ներկայացմամբ պարզապես նպատակ ենք հետապնդել ներկայացնելու խոշտանգման գործերի հետ կապված նախաքննություն իրականացնելու մեթոդական և կազմակերպական ապահովման առանձին կողմնորոշիչներ: Այլ կերպ ասած՝ ամենևին հակված չենք կարծելու, որ սույն ուղեցույցի հրապարակումով վերջնականապես և մեկընդմիջտ լուծվելու են այս տեսակի քրեական գործերով

Նախաքննության իրականացման ընթացքում ծագող բոլոր խնդիրներն այնքանով, որքանով յուրաքանչյուր քրեական գործ պահանջում է քննության կազմակերպման և իրականացման ինքնուրույն մոտեցում, ունի ուրույն փաստական դրվագաշար և դրանով պայմանավորված՝ հաճախ պահանջում է համարժեք՝ տվյալ գործի առանձնահատկություններից բխող լուծում: Դա հնարավոր էլ չէ այն իմաստով, որ պրակտիկան մշտապես առաջադրում է խնդիրներ, որոնք պահանջում են նորանոր՝ հաճախ օրենսդրությամբ չնախատեսված, բայց դրա էությունից բխող լուծումներ: Իսկ ընդունված և հանրահռչակ փաստ է այն, որ օրենսդրությունը, ներառյալ դրա շուրջ տրված մեկնաբանությունները, երբևիցե չեն կարող սպառել ճանաչողության օբյեկտը, տալ բոլորի հարցերի պատասխանները և հանգեցնել դրա կատարյալ բացահայտման:

Բայց այն, որ ուղեցույցը կարող է լինել արդյունավետ կողմնորոշիչ ծագող առանձին խնդիրների պարզաբանման, տեսություն-պրակտիկա ներդաշնակ կապի ապահովման և հնարավորության սահմաններում քննչական պրակտիկայի միասնականացման համար, կարծում ենք, ակնհայտ է:

Ավելին, հակված ենք կարծելու, որ նշված ուղեցույցը կարող է օգտակար լինել նաև ոչ միայն Հատուկ քննչական ծառայության, այլ նաև ՀՀ-ում նախաքննություն իրականացնող այլ մարմինների համար ևս: Նմանատիպ մեթոդական ուղեցույցների հրապարակումը լայն հաշվով մեկ նպատակ է հետապնդում՝ նպաստել որակյալ նախաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտագործնական բազայի կատարելագործմանը:

Հենց նշված ելակետերով է, որ խոշտանգման հանցակազմի փաստով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքի հետ մեկտեղ նաև սույն ուղեցույցի կիրառումը կարող

է էական ազդեցություն ունենալ կայացվող դատավարական որոշումների՝ ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի հետ ներդաշնակության ապահովման առումով:

Միաժամանակ, ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից նման բնույթի աշխատանքների հրապարակումը հետայսու դառնալու է բնականոն գործելաոճ՝ ուսանելի օրինակ դառնալով նաև ՀՀ-ում նախաքննություն իրականացնող այլ մարմինների համար:

*ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ,
արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների
թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան*

Վ. Շահինյան

ԽՈՇՏԱՆԳՈՒՄ: ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ

(համեմատական վերլուծություն)

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիան խոշտանգումը բնորոշում է որպես *ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտարկողությամբ պատճառվում է մարմնական կամ մտավորությամբ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան, կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց¹:*

Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ *սույն հոդվածը չի հակասում միջազգային որևէ փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել ավելի լայն կիրառման դրույթներ:*

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող

1 Տե՛ս «Խոշտանգումների եվ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի 1-ին հոդված

վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. դեկտեմբերի 10-ի կոն-վենցիան ՀՀ կողմից վավերացվել է 1993թ. հոկտեմբերի 13-ին՝ այդպիսով դառնալով ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Խոշտանգման՝ ներպետական քրեական օրենսդրությամբ և Կոնվենցիայով սահմանված իրավական ձևակերպումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված հասկացությունը, մեղմ ասած, չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված չափանիշներին:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը բնորոշում է խոշտանգումը որպես *ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտարկորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելը) նախատեսված հետևանքները:*

Ինչպես երևում է հիշատակված վկայակոչող դիսպոզիցիայի ձևակերպումից, խոշտանգման օբյեկտիվ կողմը դրսևորվում է ցանկացած այնպիսի գործողությամբ, որի միջոցով տուժողին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական, կամ հոգեկան տառապանք: Հարկ է նկատել, որ սույն պարագայում առկա է նյութական հանցակազմ այնքանով, որքանով ուժեղ ցավը կամ մարմնական, կամ հոգեկան տառապանքը նկարագրված են որպես այս հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ: Եթե դրանք չեն առաջացել, ապա ավարտված խոշտանգման հանցակազմը բացակայում է:

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված արարքը զետեղվել է մարդու դեմ ուղղված

հանցագործությունների բաժնում, մինչդեռ խոշտանգումը Կոնվենցիայի իմաստով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն է: Բացի այդ, ՀՀ քր. օր-ի 119-րդ հոդվածի սուբյեկտ կարող է հանդիսանալ ցանկացած անձ, մինչդեռ կոնվենցիոնալ իմաստով արարքը կարող է կատարել միայն պաշտոնատար անձը: Հաջորդ տարբերությունն այն է, որ ՀՀ քր. օր-ի 119-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է ուղղված լինել ցանկացած անձի դեմ, իսկ կոնվենցիոնալ իմաստով՝ միայն այն անձանց դեմ, ովքեր հանգամանքների բերումով հայտնվել են Կոնվենցիայով նշված կոնկրետ իրավիճակում:

Բացի այդ, ի տարբերություն հայ օրենսդրի մոտեցման, Կոնվենցիան՝ խոշտանգման հանցակազմի առաջացման համար որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, կարևորում է նշված արարքի առանձնակի նպատակը: Մասնավորապես, այդ նպատակը դրսևորվում է հանցավոր այնպիսի հավակնություններ կյանքի կոչելու դիտավորությամբ, ինչպիսիք են՝

ա) փուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելը,

բ) այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը,

գ) նրան կամ երրորդ անձին վախեցնելը կամ հարկադրելը,

դ) ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ փառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ:

Հիշատակված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ խոշտանգման հանցակազմի վերաբերյալ գործերի նախա-

քննության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործով նախաքննության ողջ ընթացքում պետք է պարզվի ոչ միայն ենթադրյալ հանցավորի կողմից կատարված գործողության հետևանքով տուժողին ուժեղ ցավ կամ մարմնական, կամ հոգեկան տառապանք պատճառված լինելը, այլ նաև պետք է պարզվի՝ որքանով է նշված գործողությունը կատարվել Կոնվենցիայով արժևորվող նպատակների գիտակցմամբ:

Ընդ որում, պարզ է, որ սույն պարագայում մեզանում առկա է օրենսդրական խնդիր՝ կապված խոշտանգման հանցակազմի իրավական ձևակերպման հետ: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Ուկրաինայի քրեական օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասը, ամրագրելով խոշտանգման հանցակազմը, համարժեքորեն արտացոլում է այն չափանիշները, որոնք արժևորվում են վերոհիշատակյալ կոնվենցիոնալ չափանիշներով: Մասնավորապես, նշված հոդվածով խոշտանգումը բնորոշվում է որպես *ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիրավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ծեծի, փանջանքի կամ այլ բռնի գործողությունների միջոցով տուժողին կամ այլ անձին նրանց կամքին հակասող որևէ գործողություն կատարելուն հարկադրելը:*

Նույն հոդվածի 2-րդ մասում, որպես նշված հանցակազմի ծանրացնող հանգամանք, նախատեսվում է խոշտանգման կատարված լինելն անձանց խմբի նկատմամբ կամ ազգային, ռասայական կամ կրոնական շարժառիթներով:

Այլ կերպ ասած՝ Ուկրաինայի օրենսդրությամբ թեպետ ոչ ամբողջականորեն, այսուհանդերձ, փորձ է արվել որոշակիորեն համապատասխանեցնելու խոշտանգման հասկացության ձևակերպումը կոնվենցիոնալ պահանջներին: Մինչդեռ, մեզանում առկա չէ նման համապատասխանություն, և սկզբունքորեն, դիտավորությամբ կատարված բոլոր գործողությունները, որոնք անձին պատճառել են ուժեղ ցավ կամ տառապանք, կարող են որակվել որպես ավարտված խոշտանգում: Ինքնին հասկանալի է, որ նման ձևակերպման պայմաններում չի ապահովվում ներդաշնակ համապատասխանություն արարքի էության և դրա իրավական ձևակերպման միջև:

Նշված խնդրին լուծում տալու նպատակով ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից առաջարկություն է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար: Ըստ այդմ, ՀՀ քրեական օրենսգրքի և Կոնվենցիայի ներդաշնակեցման առումով առաջարկվել է **ՀՀ քր. օր-ի 119-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝** սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պաշտոնատար անձի կողմից կամ նրա համաձայնությամբ որևէ անձից տեղեկություններ, խոստովանություն կամ այլ տվյալներ կորզելու, այն արարքի համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ այլ անձը կամ նրան կամ այլ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով²:

2 Տե՛ս Հավելված 1

**ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ
ՀՀ ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

Սույն ուղեցույցի շրջանակներում տեղին կլինեն անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի առանձին դրույթներին՝ քննարկվող հանցակազմի առավել համակողմանի ընկալումն ապահովելու համար:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մշակվել են խոշտանգումների, ոչ մարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի գործերի հետ կապված արդյունավետ քննության մի շարք չափանիշներ, որոնց Դատարանը պարբերաբար անդրադառնում է՝ վերահաստատելով և ավելի զարգացնելով դրանց հիմնադրույթները, ինչից կարելի է եզրակացնել, որ արդյունավետ քննության մեթոդներն ամենևին էլ սպառնիչ և կարծրացած չեն, և իրավունքի ու հասարակական զարգացումներով պայմանավորված՝ բացառված չէ, որ ժամանակի ընթացքում կարող են ի հայտ գալ նոր մոտեցումներ և պահանջներ ևս:

Ստորև կփորձենք ներկայացնել այն համընդհանուր,

3 Տե՛ս Հավելված 2, հոդված 3

ճանաչված ելակետային, սկզբունքային և հիմնարար դրույթները, որոնք Դատարանը մշակել է խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության համար:

Այսպես, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումների վերաբերյալ գործերի քննության արդյունքում հետևողականորեն ձևավորել է անձի նկատմամբ կիրառված 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի ապացուցման որոշակի չափորոշիչներ, որոնք հիմք են ընդունվում այս հոդվածի հիման վրա ներկայացված գանգատների քննության ընթացքում:

Մասնավորապես՝ «Աքտասն ընդդեմ Թուրքիայի» գործով վճռում Եվրոպական դատարանն ամրագրել է նաև «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափորոշիչ կիրառման սկզբունքը⁴: Ըստ Եվրոպական դատարանի՝ 3-րդ հոդվածի խախտումների վերաբերյալ գործերի քննության ընթացքում ձեռքբերված ապացույցները գնահատելիս պետք է առաջնորդվել «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափորոշչով: Նշված որոշման նույն կետում Դատարանը բացահայտել է այս չափորոշիչ բովանդակությունը, այն է՝ «ողջամիտ կասկածից վեր ապացուցումը կարող է բխել բավարար չափով լուրջ, հստակ և փոխհամաձայնեցված ենթադրություններից կամ փաստի անվիճելի կանխավարկածներից»: Այնուամենայնիվ, այդպիսի ապացույցը կարող է բխել բավականաչափ ծանրակշիռ, պարզ և համահունչ եզրակացությունների և նմանատիպ փաստերի կանխավարկածի գոյակցությունից: Եթե իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծամասամբ

4 Տե՛ս «Aktas v. Turkey», Judgment of 24 April 2003, կետ 270 կամ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», խմբ. Գ.Հարությունյանի, Երևան 2005, էջ 62

հայտնի են իշխանություններին, ինչպես նաև անձանց գործերում, ովքեր գտնվում են իրենց վերահսկողության ներքո՝ կալանքի տակ, ապա առկա են ծանրակշիռ կասկածներ կալանքի ընթացքում այդ վնասվածքների առաջացման առնչությամբ: Անշուշտ, ապացուցման բեռն ընկած է իշխանությունների վրա՝ բավարար և համոզիչ բացատրություն ապահովելու համար⁵: Այլ կերպ ասած՝ ՄԻԵԴ-ը ելնում է այն կանխավարկածից, որ խոշտանգման փաստն առկա է, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

Բնականաբար, այս հանգամանքն ունի առավելապես դատավարական բնույթ և կոչված է երաշխավորելու, որ կոնկրետ արարքի կատարման գործում անձի մեղավորությունը հաստատվի գործին վերաբերող թույլատրելի, վերաբերելի և փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջությամբ:

Դատարանը, պայմանավորված ժողովրդավարական հասարակության համար Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խիստ կարևորությամբ, այդ հոդվածով արգելված արարքների ապացուցման գործընթացի նկատմամբ որդեգրել է առանձնակի մոտեցում: Կոնվենցիայի 3-րդ հոդվածին առնչվող գործերը Դատարանը դատում է այն գործերի շարքին, որոնց դեպքում Եվրոպական դատարանին ուղղված գանգատների քննությունը շեղվում է ապացուցման այն սկզբունքի հետևողական և խիստ կիրառումից՝ ըստ որի՝ «նա, ով պնդում է ինչ-որ բան, պետք է ապացուցի այդ պնդման իսկությունը»:

Պետք է նկատի ունենալ նաև, որ գործով քննության պատշաճ փաստաթղթավորումը կարևորվում է նաև առանձին գործերով Եվրոպական դատարանի ձևավորած իրավական այն

5 Տե՛ս «Սալմանն ընդդեմ Թուրքիայի», թիվ 21986/93, կետ 100. ՄԻԵԴ 2000թ.-VII

մոտեցմամբ, որ պայմանավորվող պետությունները կրում են գանգատների քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով բոլոր անհրաժեշտ հնարավորությունները տրամադրելու ընդհանուր պարտավորություն: Այս ընդհանուր պարտավորությունն էլ ավելի է կարևորվում հատկապես այն համատեքստում, որ խոշտանգումների կամ 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի կիրառման մասին պնդումները հնարավոր է հերքել կամ հաստատել այնպիսի տեղեկատվության միջոցով, որը մատչելի է միայն պատասխանող կառավարությանը: Ուստի, եթե պատասխանող կառավարությունը որևէ հիմնավոր բացատրություն չի ներկայացնում կամ հապաղում է ներկայացնել դիմողի պնդումները հերքող կամ հաստատող տեղեկատվություն, Դատարանը պատասխանող պետության նման վարքագիծը դիտում է որպես դիմողի պնդման հիմնավորվածության ապացույց:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի ապացուցման առնչությամբ Եվրոպական դատարանի դիրքորոշումն ունի որոշակի առանձնահատկություն, երբ խոսքը վերաբերում է այդ վերաբերմունքի կիրառմանը ձերբակալվածների կամ կալանավորվածների նկատմամբ:

ՄԻԵԴ-ի տեսակետի համաձայն ձերբակալվածները և կալանավորվածները խոցելի վիճակում են, և իշխանությունները պարտավոր են պաշտպանելու նրանց⁶: *Պետությունը բարոյապես պարտասխանատու է կալանքի փակ գտնվող յուրաքանչյուր անձի համար, քանի որ այդ անձինք ամբողջովին*

6 Տե՛ս «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», խմբ. Գ.Հարությունյանի, Երևան 2005, էջ 63, 2-րդ պարբերություն

գտնվում են ոստիկանության ծեռքում: Հերևաբար, եթե ոստիկանություն բերվելուց առաջ անձն իր առողջության հետ կապված խնդիրներ չի ունեցել, սակայն ոստիկանության հսկողության տակ հայտնվելուց նրա մոտ հայտնաբերվել են վնասվածքներ, պարասխանող պետրությունը պարտավոր է ներկայացնել արժանահավատ բացատրություն՝ առ այն, թե այդ վնասվածքներն ինչպես են առաջացել: Երբ խնդրո առարկա իրադարձություններն ամբողջովին կամ մեծ մասամբ իշխանությունների բացառիկ իմացության շրջանակում են, ինչպես անձանց ձերբակալված կամ կալանավորված լինելու դեպքում է, կալանքի տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքների կապակցությամբ առաջանում է խոշտանգման փաստի լուրջ կանխավարկած: Ապացուցման բեռը կրում է պատասխանող կառավարությունը. վերջինս պարտավոր է ներկայացնել բավարար և համոզիչ բացատրություն կալանքի տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքների վերաբերյալ, եթե անձը, մեկնաբանելով Պայմանավորվող պետությունների՝ «իրենց իրավազրոության տակ գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայի 1-ին բաժնով սահմանված իրավունքներն ու ազատություններն ապահովելու» Կոնվենցիայի 1-ին հոդվածը⁷, առաջադրում է վիճելի գանգատ՝ առ այն, որ իր նկատմամբ ոստիկանության կամ պետական մարմինների այլ ներկայացուցիչներ անօրինականորեն կիրառել են այդ հոդվածով արգելված վերաբերմունք, և պահանջում է արդյունավետ պաշտոնական քննություն: Այլապես, խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար նշանակությանը, գործնականորեն

7 Տե՛ս Հավելված 2, հոդված 1

կլիներ անարդյունավետ, և որոշ դեպքերում պետության ներկայացուցիչների համար հնարավոր կոառնար չարաշահել իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները:

Հետաքրքիր է նաև այն, որ պետության անգործությունն այս պարագայում ՄԻԵԴ-ը դիտարկում է անբարեխղճության կանխավարկածի համատեքստում: Եթե պատասխանող կառավարությունն իր օրենսդրությամբ համապատասխան ընթացք չի տալիս ձերբակալված կամ կալանավորված անձի՝ նման վիճելի գանգատին, թերանում է նման քննություն իրականացնելու հարցում և նման քննության միջոցով չի պարզում կալանքի տակ գտնվող անձանց՝ ոստիկանության հսկողություն տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքների հետ կապված այլ հանգամանքներ, ապա ՄԻԵԴ-ն առաջնորդվում է այն կանխավարկածով, որ այդ վնասվածքները պատճառվել են ոստիկանների կամ պետական մարմինների այլ ներկայացուցիչների կողմից՝ ի խախտումն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի:

Ասվածը հիմնավորելու համար վկայակոչենք առավել տիպական մեկ օրինակ ՄԻԵԴ-ի պրակտիկայից.

Այսպես, «Սևափ Վեզնեդարոգլուն ընդդեմ Թուրքիայի» գործով⁸ Եվրոպական դատարան էր դիմել Քրդական աշխատավորական կուսակցությանն անդամակցելու կասկածանքով ձերբակալված մի կին: Վերջինս պնդում էր, որ ոստիկանությունում իրենից վկայություն է կորզվել, և ինքը պարտադրվել է ստորագրելու որոշակի փաստաթղթեր խոշտանգումների և մահվան սպառնալիքի ազդեցությամբ: Խոշտանգումները մասնավորապես դրսևորվել են նրանով, որ նրան կատմամբ կիրառվել է ֆիզիկական ուժ, երկու օր շարունակ

8 Տե՛ս «Sevta Veznedarogly v. Turkey», Judgment of 11 April of 2000

անունդ չի տրամադրվել: Ոստիկանության հսկողության տակ գտնվելու ընթացքում բժիշկը զննել է նրան, որի արդյունքում տրված տեղեկանքի համաձայն՝ դիմողի մարմնի վրա եղել են կապտուկներ, սակայն դրանք ձերբակալվածի առողջության համար վտանգ չեն ներկայացրել և աշխատունակության կորստի չեն հանգեցրել: Հետագայում դատական քննության ընթացքում դիմողը հրաժարվել է ոստիկանությունում տրված իր վկայություններից՝ պատճառաբանելով, որ դրանք տվել է խոշտանգումների ազդեցությամբ: Դատարանը, հիմք ընդունելով դիմողի այս հայտարարությունը և ապացույցների անբավարարությունը, արդարացրել է դիմողին: Կալանքից ազատվելուց հետո դիմողին հիվանդանոցային բժշկի կողմից տրվել է 20-օրյա անաշխատունակության թերթիկ:

Դիմելով Եվրոպական դատարան՝ դիմողը պնդել է, որ դարձել է ոստիկանության կողմից իր նկատմամբ կիրառված խոշտանգումների զոհ: Իր պնդման հիմնավորվածությունն ապացուցելու համար նա Եվրոպական դատարան է ներկայացրել ոստիկանների կողմից իր նկատմամբ կիրառված խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունները՝ ուղղված ներպետական իշխանություններին, ինչպես նաև՝ ոստիկանությունում ստացած վնասվածքների կապակցությամբ տրված անաշխատունակության թերթիկը:

Պատասխանող կառավարությունը, փորձելով հերքել դիմողի պնդումները, նշել է, որ ներպետական իշխանությունների կողմից իրականացված քննության արդյունքում պարզվել է, որ անաշխատունակության թերթիկը կեղծված է և տրված է ոչ թե ոստիկանությունում ստացած վնասվածքների, այլ թոքերի բորբոքման կապակցությամբ: Ըստ պատասխանող կառավարության՝ դիմողը կատարել է միայն մերկապարանոց հայտա-

րարություններ իր նկատմամբ կիրառված վերաբերմունքի վերաբերյալ՝ առանց դրանք համապատասխան ապացույցներով հիմնավորելու:

ՄԻԵԴ-ը հաստատված է համարել, որ վնասվածքները դիմողին պատճառվել են ոստիկանությունում գտնվելու ընթացքում, սակայն նկատել է նաև, որ Դատարանին ներկայացված ապացույցների հիման վրա անհնար է պարզել, թե արդյո՞ք այդ վնասվածքները պատճառվել են ոստիկանների կողմից: Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ, Դատարանը նկատել է, որ դիմողի մարմնի վնասվածքների առաջացման պատճառները պարզելու դժվարությունները պայմանավորված են եղել խոշտանգումների վերաբերյալ դիմողի հայտարարությունների կապակցությամբ պատասխանող կառավարության կողմից քննություն չիրականացնելու հանգամանքով:

Դատարանը հաստատված է համարել, որ դիմողը դատախազի և գործը քննող դատավորի առջև հայտարարել է ոստիկանների կողմից խոշտանգումների ենթարկված լինելու մասին, ըստ բժշկական տեղեկանքի՝ դիմողի մարմնի վրա եղել են կապտուկներ, դատական նիստի արձանագրությունում նշվել է դիմողի հայտարարությունը խաշտանգումների ազդեցությամբ խոստովանություն կատարելու փաստի վերաբերյալ: Սակայն, չնայած այդ ամենին, ներպետական իշխանությունները որևէ քայլ չեն ձեռնարկել դիմողից իր պնդումների վերաբերյալ այլ մանրամասներ ձեռք բերելու և համապատասխան ոստիկաններին հարցաքննելու ուղղությամբ:

Դատարանը, ելնելով վերոհիշյալ հանգամանքներից, եզրակացրել է, որ դիմողն իր նկատմամբ կիրառված վերաբերմունքի կապակցությամբ առաջադրել է վիճելի գանգատ ներպետական իշխանությունների առջև, ընդ որում՝ իր պնդումները շարու-

նակել է նաև դատաքննության ընթացքում: **Սակայն, ի պատասխան դիմողի պնդումների, ներպետական իշխանությունները դրսևորել են անտարբեր վերաբերմունք, ինչը, ըստ Եվրոպական դատարանի, անհամարեղելի է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նրանց վրա դրված դատավարական պարտավորության հետ: Արդյունքում՝ Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը՝ ելնելով այն հանգամանքից, որ պատասխանող պետության իշխանությունների դիմողի՝ իր նկատմամբ խոշտանգումների կիրառման վերաբերյալ գանգաղների կապակցությամբ քննություն չեն իրականացրել:**

Հատկանշական է այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի մասնակից պետությունները, Կոնվենցիայի 1-ին հոդվածի հիման վրա, կրում են իրենց իրավազորության փակ գործընթացում յուրաքանչյուր անձի համար Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատություններն ապահովելու պարտավորություն: Այդ պարտավորությունը ոչ միայն ներառում է Կոնվենցիայի մասնակից պետությունների՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատությունները չխախտելու պարտավորությունը, այլ նաև պետության պոզիտիվ պարտավորությունը՝ ձեռնարկելու այնպիսի միջոցներ, այդ թվում՝ համապատասխան ներպետական օրենսդրության ընդունում, որն անհրաժեշտ է այդ իրավունքների պաշտպանությունն ապահովելու, երրորդ անձանց կողմից դրանց հնարավոր խախտումները կանխելու համար: Հետևաբար, Պայմանավորվող պետությունները պատասխանատվություն են կրում ոչ միայն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները պետության՝ պետական մարմինների

կամ պետության ներկայացուցիչների կողմից խախտելու համար, այլ նաև մասնավոր անձանց կողմից այդ իրավունքների խախտման համար, եթե այդ խախտումն արդյունք է նրա, որ Պայմանավորվող պետությունը չի կատարում Կոնվենցիայով նախատեսված իրավունքները երրորդ անձանց ոստիճակից պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու իր պոզիտիվ պարտավորությունը:

Պայմանավորվող պետությունները պոզիտիվ պարտավորություն են կրում նաև Կոնվենցիայի 3-րդ հոդվածի առնչությամբ: Մի շարք վճիռներով Եվրոպական դատարանն ամրագրել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա Պայմանավորվող պետության պատասխանատվությունը կարող է ծագել պետության կողմից այնպիսի միջոցներ չձեռնարկելու արդյունքում, որոնց միջոցով անհրաժեշտ է ապահովել պաշտպանությունն ընդդեմ խոշտանգումների, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Դատարանը եզրակացրել է, որ պետությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա պարտավոր է երաշխավորել, որ իր իրավազորության տակ գտնվող անձինք չենթարկվեն Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի, նույնիսկ՝ այն դեպքում, երբ այդ վերաբերմունքը բխում է մասնավոր անձանցից: Այս մոտեցումն է ամրագրված Ա.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում և Զ.-ն և այլք ընդդեմ Միացյալ թագավորության գործով վճռում:

Ավելին, եթե պաշտոնական քննությունը հանգեցրել է ներպետական դատարաններում վարույթ սկսելուն, ապա վարույթն ամբողջությամբ, ներառյալ դատավարական փուլը, պետք է բավարարի վատ վերաբերմունքի արգելքի պահանջները: Առկա չէ բացարձակ պարտավորություն առ այն, որ բոլոր

հետապնդումները պետք է հանգեցնեն դատապարտման, այնուամենայնիվ, ներպետական դատարանները որևէ պարագայում չպետք է թույլատրեն ֆիզիկական և բարոյական ամբողջականության նկատմամբ դաժան հարձակումները և անպատիժ մնալը:

«Բարանը և Հանն ընդդեմ Թուրքիայի» գործով⁹ ՄԻԵԴ-ն էլ ավելի խորացրեց իր դիրքորոշումը և արձանագրեց, որ եթե անձը կալանավորվում է առողջ վիճակում, սակայն ազատ արձակվելու պահին ունի վնասվածքներ, ապա պետությունը պետք է ապահովի ճշմարտացի բացատրություն, թե ինչպես են այդ վնասվածքները պատճառվել, և ներկայացնի ապացույցներ, որոնց միջոցով կասկածի տակ կառնվեն դիմողի պնդումները, եթե հատկապես այդ պնդումները հիմնավորված են *բժշկական եզրակացությամբ, այլապես՝ առաջանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում*:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև այս հանցակազմի հետ կապված ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած նախադեպային դիրքորոշումները: ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հատկապես «խոշտանգման» և «ծեծ» հանցակազմերի տարբերակման խնդրին և արտահայտել իրավական դիրքորոշում՝ որի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի («խոշտանգման») պարտադիր հատկանիշներից մեկը համարվում է ֆիզիկական ուժեղ ցավի առկայությունը¹⁰: Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով

9 Տե՛ս «Բարանը և Հանն ընդդեմ Թուրքիայի», ՄԻԵԴ-ի 2010 թ.-ի մայիսի 10-ի որոշում, կետ 49

10 Տե՛ս Հավելված 3, 25-րդ կետ

(դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառել), դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշների բացակայության, ինչպես նաև այն դեպքում, երբ անձին պատճառվում է ֆիզիկական ցավ, արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (Ծեծ), ուժեղ ցավ կամ մարմնական, կամ հոգեկան տառապանք պատճառելու դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով (խոշտանգում): Եթե արարքը փաստացի չի առաջացրել ֆիզիկական ցավ, մարմնական կամ հոգեկան տառապանք և այդպիսիք պատճառելու դիտավորությամբ չի բնութագրվում, իր նվազ կարևորության պատճառով չի կարող հանցագործություն համարվել (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս): (դատական գործ հա: ԱՐԴ/0176/01/11): Այսուհանդերձ, ավելորդ չէ հիշատակել, որ Վճռաբեկ դատարանն այդպես էլ չի պատասխանել այն հարցին, թե ինչո՞վ են իրարից տարբերվում խոշտանգման շրջանակներում անձին պատճառվող ուժեղ ֆիզիկական ցավը ծեծ հանցակազմի շրջանակներում պատճառվող ֆիզիկական ցավից:

Ակներև է, որ որպես տարբերակիչ հատկություն՝ չի կարող դրվել և համարժեքորեն կիրառվել բռնությամբ պատճառվող ցավի ուժեղ կամ թույլ լինելը: Վերջիններս սուբյեկտիվ ընկալման տիրույթում գտնվող վերացական հասկացություններ են, որոնք չեն կարող ծառայել գործնական ցուցիչ նշված երկու հանցակազմերի տարբերակման համար: Նման պայմաններում գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակեցնել նշված երկու հանցակազմերի իմաստով գործադրվող բռնությունների տարբերակիչ գծերը՝ դատական և քննչական պարակտիկայում դրանց պատշաճ որակումն ապահովելու համար, մասնավորապես՝

դիտավորյալ կատարված յուրաքանչյուր գործողության հետևանքով հարուցված ենթադրյալ հոգեկան տառապանքը չի կարող առաջացնել քրեաիրավական հետևանքներ՝ խոշտանգման հանցակազմի իմաստով: Այլ կերպ ասած՝ տառապանքը պետք է լինի ողջամտորեն նշանակալի, բերի տուժողի հոգեկան խոր մտորումների, խաթարի սեփական պատիվն ու արժանապատվությունը և հանգեցնի նրա անձի, ձեռք բերած անվան ընկալման ձևախեղմանը: Խոշտանգում հանդիսացող դիտավորյալ արարքները պետք է միտված լինեն հոգևոր առումով ընկճելու, էապես խախտելու անհատ-հասարակություն հարաբերության ներդաշնակությունը: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում պետք է առանձին, բազմակողմանի հետազոտման և գնահատման առարկա դառնա՝ արդյո՞ք արարքն օբյեկտիվորեն կարող էր առաջացնել վերոգրյալ հետևանքները, թե՞, այնուհանդերձ, կատարվածը սոսկ համակեցության ընդունված կանոնները խախտելուն և անհատի սոցիալական, իրավական կարգավիճակն ու հոգեկան աշխարհը խռովելուն անընդունակ չխրախուսվող վարքագիծ է: Կարծում ենք, հենց այստեղ պետք է տեսնել խոշտանգման իմաստով հոգեկան տառապանքի տարբերությունն այլ գործողությունների հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքներից:

**ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ**

Ներպետական և միջազգային օրենսդրության հետևողական ներդաշնակեցման պահանջը կարևորվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից դեռևս 30.03.2011թ. ընդունված մարդու իրավունքների խախտման դեմ ուղղված պայքարի հիմնական սկզբունքներում:

Մասնավորապես, Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) խոշտանգման վերաբերյալ գործեր քննելիս առաջարկում է ապահովել որոշակի գործողությունների անվերապահ իրականացում: Նման գործողություններն ուղղակիորեն բխում են Կոնվենցիայով սահմանված որոշակի իրավական երաշխիքների առավելագույնս կիրարկելու անհրաժեշտությունից: Մասնավորապես, այս կառույցի կողմից առաջադրվող հրամայականները հանգում են հետևյալին.

Որպես ոսկե կանոն՝ պետք է գիտակցել, որ Կոնվենցիան պահանջում է, որ անցկացվի արդյունավետ պաշտոնական քննություն: *Քննություն կատարելու պարտավորությունը ոչ թե արդյունքի, այլ միջոցների պարտավորությունն է: Պարտադիր չէ, որ քննությունը հանգի այն եզրակացությանը, որը համընկնում է դիմողի պնդումներին, սակայն այն պետք է սկզբունքորեն հաստատի գործի փաստերը, և պնդումները ճշմարիտ լինելու դեպքում՝ հայտնաբերի և պարտի պատասխանատու անձանց: Այսպիսով, վար վերաբերմունքի լուրջ պնդումների քննությունը*

պետք է լինի հիմնավոր: Դա նշանակում է, որ իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն հապճեպորեն արված կամ անհիմն եզրակացությունների վրա՝ քննությունը դադարեցնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր քայլերը՝ ապահովելու համար դեպքի հետ կապված ապացույցները՝ ներառյալ ականատեսների վկայությունները, դատաբժշկական ապացույցները և այլն: Քննության ցանկացած թերություն, որը վրանգում է վնասվածքներ հասցնելու պատճառների կամ պատասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է խախտել այդ չափորոշիչը:

Պետք է նկատի ունենալ, որ այս կարգի գործերի քննությունը ենթադրում է ապացուցման գործընթացի կազմակերպման որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, խոշտանգման գործերով պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել մի շարք վավերապայմանների առկայությանը, որոնց առերևույթ չպահպանումը կարող է բարձրացնել համոզմունքի աստիճանն առ այն, որ խոշտանգման փաստն իրոք առկա է: Այլ կերպ ասած՝ այս պարագայում գործում է խոշտանգման փաստի առկայության կանխավարկածը, քանի դեռ ողջամիտ ապացուցողական միջոցներով և գործիքներով չի ապացուցվել հակառակը: Նման պահանջը կարևորվում է հատկապես Եվրադատարանի այն որոշումների համատեքստում, որ գործերի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցները գնահատելիս պետք է առաջնորդվել «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափորոշչով: Նշված վճռի նույն կետում Դատարանը բացահայտել է այս չափորոշչի բովանդակությունը, այն է՝ «**ողջամիտ կասկածից վեր ապացուցումը կարող է բխել բավարար չափով լուրջ,**

հստակ և փոխհամաձայնեցված ենթադրություններից կամ փաստի անվիճելի կանխավարկածներից»:

Նշված վավերապայմանները հանգում են հետևյալին.

Խոշտանգման փաստը պարզելու համար պետք է խոշտանգման վերաբերյալ հաղորդում ստանալու պահից պարզաբանել հետևյալ հանգամանքները.

1) Իրավապահ մարմիններ բերման ենթարկելու պահից պահպանվել են արդյոք ՀՀ կառավարության կողմից 14.06.2007թ. թիվ 818-Ն «**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԻՈՂ՝ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**» որոշմամբ սահմանված պահանջները¹¹,

2) Իրավապահ մարմինների կողմից բերման ենթարկվելուց հետո նշված անձի և նրա կատարած ենթադրյալ հանցանքի վերաբերյալ ինչպիսի քրեադատավարական գործողություններ են կատարվել, նրա կողմից ենթադրաբար կատարված հանցանքի փաստի առթիվ հարուցվել է արդյոք քրեական գործ, ինչ ընթացք է ստացել, արգելանքի վերցվել է, թե՛ ոչ, և ինչ դատավարական հարկադրանքի միջոցներ են կիրառվել:

3) Արգելանքի վերցնելուց կամ խափանման միջոց կիրառելուց առաջ դիմող անձը մարմնական վնասվածքներ ունեցել է, այդ մասին համապատասխան արձանագրություններ կազմված եղել են: Դրանց առաջացման ինչ պատճառաբանություններ են ներկայացվել պատկան մարմինների կողմից:

4) Ձերբակալվածներին պահելու վայր ներկայացնելուց հետո արդյոք պահպանվել են ՀՀ կառավարության կողմից 05.06.2008թ. թիվ 574-Ն «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

11 Տե՛ս Հավելված 4

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՐԲԱ-
ԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈ-
ՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»** որոշման 13-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն N 12 ձևի, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին¹²:

5) Մարմնական վնասվածքների առաջացման կապակցությամբ դիմողն իր նկատմամբ բռնությունների կիրառման և իրեն մարմնական վնասվածքներ պատճառելու վերաբերյալ իրավունքները սահմանափակելիս, արգելանքի վերցնելիս, խափանման միջոց կիրառելիս (այդ թվում նաև՝ դատարանում կալանք) ինչպիսի հայտարարություններով է հանդես եկել, կամ այդ մասին համապատասխան արձանագրություններում նշումներ կատարվել են, թե՛ ոչ:

12 Տե՛ս Հավելված 5

6) Արձանագրված (արգելանքի վերցնելիս, ՁՊՎ տեղափոխելիս և այլն) մարմնական վնասվածքների կապակցությամբ իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանումների կողմից արդյո՞ք իրականացվել է ծառայողական քննություն, հարուցվե՞լ է ենթադրյալ խոշտանգման փաստի վերաբերյալ քրեական գործ և ի՞նչ ընթացք է ստացել:

7) Փաստաբանի կողմից դիմողի՝ առկա մարմնական վնասվածքների կամ նրա նկատմամբ ենթադրաբար գործադրված բռնության, խոշտանգման դեպքի հետ կապված իրավապահ կամ այլ իրավասու մարմիններին ներկայացվել են արդյո՞ք համապատասխան հաղորդումներ, միջնորդություններ, միջնորդագրեր կամ այդպիսիք հիմնավորող փաստաթղթեր:

Վերը շարադրված հանգամանքների պարզաբանումը նախնական ազդակ կարող է հանդիսանալ անձի նկատմամբ կիրառված խոշտանգման փաստի վերաբերյալ ողջամիտ կասկածը հիմնավորելու համար:

Կոմիտեն ընդհանուր առմամբ կարևորում է չորս հիմնարար սկզբունքների անխաթար պահպանումը խոշտանգման գործերով նախաքննություն իրականացնելիս: Դրանք են.

- ա) Քննություն իրականացնող մարմինների լիակատար անկախություն, անաչառություն և օպերատիվություն,
- բ) Տուժողների մասնակցությունը գործին,
- գ) Համարժեքություն,
- դ) Հասարակական վերահսկողություն:

Ա. Քննություն իրականացնող մարմինների լիակատար անկախություն և անաչառությունը: Որպես քննության

անաչառության նախապայման՝ Եվրադատարանի կողմից առանձնակի արժևորվում է քննություն իրականացնող մարմնի իրական անկախությունը, որը հանդես է գալիս որպես յուրօրինակ

ցուցիչ՝ գնահատելու վարույթն իրականացնող մարմնի գործողությունների արժանահավատությունը: Այլ կերպ ասած՝ քննությունն իրականացնող մարմինը պետք է լինի անկախ, զերծ ամեն տեսակ գերատեսչական միջամտությունից: Նշված հանգամանքն էապես բարձրացնում է հանրային վստահությունը քննության իրականացման անկողմնակալության, օբյեկտիվության շուրջ՝ յուրօրինակ սկզբունք-երաշխիք դառնալով նաև մյուս պահանջների կենսագործման համար: Այս պահանջի շրջանակներում տեղին կլիներ հիշատակել գործերից մեկով ՄԻԵԴ-ի դիրքորոշումը՝ որի համաձայն՝ (...) Ոստիկանության դեմ բողոքելու մեխանիզմը պետք է վայելի հանրության վստահությունը, **այն ոչ միայն պարզապես պետք է լինի անկախ, այլ այն պետք է անկախ լինի ոստիկանությունից: Դատարանը նշել է նաև, որ գործի հանգամանքների սկզբնական ստուգումը կատարվել է այն հաստատության կողմից (Ներքին գործերի նախարարություն), որպեսզի աշխատել է վար վերաբերմունքի մեջ կասկածվողների մեծ մասը (ոստիկանությունը նախարարության կազմում էր):**

Ի կատարումն ՄԻԵԴ-ի պահանջների՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի հանձնարարականի համաձայն, ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից քննչական խումբ կազմելու դեպքում այդ խմբի կազմում չեն ներգրավվելու ՀՀ այն իրավապահ մարմինների քննիչները, որտեղ ծառայել կամ ծառայում է ենթադրյալ խոշտանգում կատարած անձը¹³:

Տեղին է ընդգծել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով սահմանված արդյունավետության նվազագույն չափորոշիչները ներառում են այն պահանջները, որ քննությունը լինի **անկախ, անաչառ**

13 Տե՛ս Հավելված 6

և հրապարակային, և որ իրավասու մարմինները գործեն օրինակելի աշխատասիրությամբ և արագությամբ:

Անհապաղ օպերատիվությամբ անհրաժեշտ քննչական գործողությունների կատարումը հրամայական է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեծ մասամբ խոշտանգման վերաբերյալ հաղորդումները տրվում են դեպքից բավական ժամանակ անց, ինչն արդեն իսկ դժվարացնում է ապացույցների ձեռքբերումը:

Տուժողների մասնակցությունը գործին ենթադրում է, որ տուժողները պետք է ունենան հետևյալ նվազագույն իրավունքները՝

- Անհրաժեշտության դեպքում ստանալ բժշկական օգնություն, իր պահանջով ստանալ իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում,
- Իր նախընտրած փաստաբանին հրավիրելու իրավունք,
- Անկախ բժշկի կողմից իրեն դատաբժշկական-հոգեբանական-հոգեբուժական համալիր զննության ենթարկել,
- Խոշտանգման փաստը պարզելու համար պետք է ապահովվի տուժողի դատաբժշկական-հոգեբանական-հոգեբուժական համալիր փորձաքննության և համապատասխան եզրակացության կազմում, որով պետք է հաստատվի՝
 - ա) արդյո՞ք տուժողի նկատմամբ գործադրվել է բռնություն կամ պատճառվել են մարմնական վնասվածքներ, որի հետևանքով նա կրել է ֆիզիկական կամ հոգեկան տառապանք,
 - բ) արդյո՞ք տվյալ բռնությունն օբյեկտիվորեն կարող էր տուժողի մոտ հարուցել հոգևոր կամ ֆիզիկական տառապանք,
- Անհրաժեշտության դեպքում տուժողի նկատմամբ ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով

սահմանված համապատասխան պաշտպանության միջոցներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր կայացրած որոշումներով բազմիցս կարևորել է բժշկական քննության պատշաճությունը՝ որպես կարևոր երաշխիք վատ վերաբերմունքի դեմ: Դատական բժիշկը պետք է ունենա պաշտոնական և փաստացի անկախություն: Երբ բժիշկը պատրաստում է բժշկական զննության զեկույց անձի վերաբերյալ, ով պնդում է, որ ենթարկվել է վատ վերաբերմունքի, ապա չափազանց կարևոր է, որ բժիշկը նշի վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումներին դրա համապատասխանության աստիճանը, որը պետք է հիմնված լինի հնարավոր տարբերակող ախտորոշումների քննարկման վրա (*վատ վերաբերմունքին չառնչվող վնասվածքներ, այդ թվում՝ ինքն իրեն հասցված վնասվածքներ և հիվանդություններ*): ՄԻԵԴ-ում քննվող գործերից մեկում նշված գործողությունները չէին կատարվել: Դատարանը նշել է, որ փորձագետը ոչ միայն պատշաճորեն չի գրանցել դիմողի վնասվածքները, այլ նաև չի կատարել դիմողի՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների աստիճանի գնահատում: Հաշվի առնելով նախնական փորձագիտական զեկույցի լուրջ թերությունները՝ Դատարանը եզրակացրել է, որ ցավալի է, որ լրացուցիչ փորձաքննությունը նշանակվել էր միայն դիմողի նկատմամբ կիրառված վատ վերաբերմունքից գրեթե չորս ամիս անց, նշել է նաև, որ լրացուցիչ փորձագիտական եզրակացության ձգձգումը, ի թիվս այլ խնդիրների, առաջացրել է լուրջ հակասություններ դիմողին զննած շրջանային հիվանդանոցի և դատական բժիշկների եզրակացությունների միջև¹⁴:

14 Տե՛ս «Բարաբանշիկովն ընդդեմ Ռուսաստանի», ՄԻԵԴ-ի 2009թ.-ի հունվարի 8-ի որոշում, կետ 59

Բ. Համարժեքությունը ենթադրում է, որ նախաքննության ընթացքում պետք է ձեռք բերվեն անհրաժեշտ ապացույցներ, որի արդյունքում բացահայտվի. արդյո՞ք իրավապահ մարմինների կողմից կատարված գործողությունները համապատասխանել են գործող օրենսդրությանը, բխել դրա պահանջներից: Այլ կերպ ասած՝ պետք է ապահովվի հանրային-իրավական գործողության համարժեքությունը ստեղծված իրավիճակին: Միաժամանակ, այն ենթադրում է, որ նման դեպքերում հանցանք կատարած անձը պետք է ենթարկվի օրենքով սահմանված համարժեք պատասխանատվության:

Համարժեք քննությունն ապահովելու նպատակով ՄԻԵԴ-ն արտահայտել է այն տեսակետը, որ եթե *պետության ներկայացուցիչը մեղադրվում է այնպիսի հանցագործությունների մեջ, որոնք ներառում են խոշտանգումներ կամ անմարդկային վերաբերմունք, չափազանց կարևոր է, որ նրա աշխատանքային լիազորությունները կասեցվեն քննության և դատավարության ընթացքում և դատապարտվելու դեպքում դրանք պետք է արգելվեն:*

1. Այս առումով՝ անհրաժեշտ է քրեական գործ հարուցելու հետ մեկտեղ հնարավորինս սեղմ ժամկետում քննարկել ենթադրյալ խոշտանգում կատարած կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը օրենքով սահմանված կարգով ժամանակավոր դադարեցնելու հարցը:

Չնայած այն հանգամանքին, որ նշված հոդվածի պահանջների համաձայն՝ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կիրառվում է բացառապես հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, այսուհանդերձ, կարծում ենք, որ նման միջոցը կարող է արդյունավետ գործիք հանդիսանալ քննության առջև ծառայած խնդիրները լուծելու համար:

Ինչ վերաբերում է հանրային ծառայությանը, ապա պետք է նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հանրային ծառայությունը պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը ...*: Իսկ նույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ*:

Միաժամանակ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը պարբերաբար ամփոփելու է այս բնույթի հանցագործությունների քննության արդյունքները, առաջարկներ է ներկայացնելու քննության որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև այս բնույթի հանցագործությունների կատարման պատճառների ու նպաստող պայմանների վերացմանն ուղղված միջոցների մշակման և կանխարգելման մասին, անհրաժեշտության դեպքում ՀՀ քր. դատ. օր-ի 200-րդ հոդվածով նախատեսված կարգով միջնորդագրեր է ներկայացնելու խոշտանգման վերաբերյալ դիմումներում առավել հաճախակի մատնանշված ՀՀ իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանումներ՝ խոշտանգումների

կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին:

2. Տուժողի շահերի պաշտպանության արդյունավետության և համարժեքության իրավական երաշխիքներ ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է կիրառել ՀՀ քր. դատ. օր-ի 98-99 հոդվածներով նախատեսված քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոցներ, ինչն էապես կարող է կանխել վերջինիս վրա տարատեսակ ապօրինի ճնշումների գործադրումը:

Համարժեքության հարցին է անդրադարձել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ Արայիկ Գզոյանի վերաբերյալ 2010թ-ի փետրվարի 12-ի որոշմամբ¹⁵: Ըստ այդ գործի դատավարական նախապատմության՝ Արայիկ Գզոյանը բերման էր ենթարկվել ՀՀ ոստիկանության համապատասխան վարչություն՝ թմրանյութ իրացնելու կասկածանքով: Հարցաքննության ընթացքում Ա.Գզոյանը հայտնում է, որ ոստիկանությունում իր տված բացատրությունները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ իրեն այնտեղ ծեծի են ենթարկել, երեխաների հասցեին ահաբեկչական հայիոյանքներ և սպառնալիքներ են հնչել, ինչպես նաև ռետինե մահակներով հարվածել են իր ոտքերին, երիկամներին և մարմնի այլ մասերին, ինչի հետևանքով պայթել է ծախս ականջի ականջաթաղանթը, և ինքը լիովին կորցրել է այդ ականջի լսողությունը ու մի քանի սեղանատամներ:

Ա.Գզոյանի այդ հայտարարության, ինչպես նաև նրան խոշտանգման ենթարկելու՝ պաշտպանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա նշանակվել է ծառայողական քննություն,

15 Տե՛ս Արայիկ Գզոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0049/01/09 որոշումը

որի արդյունքում կայացված եզրակացության մեջ ծառայողական քննությունն իրականացրած մարմինը սահմանափակվել է միայն ՀՀ կառավարության 14.06.2007թ-ի «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների» որոշման 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու, այն է՝ ՀՀ ոստիկանության համապատասխան վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Գզոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա.Գզոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու հարցերի քննարկմամբ, ինչպես նաև հարցն առաջադրվել է ՀՀ ոստիկանության համապատասխան վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում՝ Գզոյանի կողմից մատնանշված՝ որպես իր նկատմամբ խոշտանգում իրականացրած ոստիկանության ծառայողի մասնակցությամբ:

Ինչպես երևում է վերոշարադրյալ մեջբերումից, ծառայողական քննություն իրականացրած մարմինը չի անդրադարձել մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությանը, դա ստուգելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատաբժշկական փորձագետի եզրակացությունն առանցքային նշանակություն ունի խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության համար:

Այս առումով՝ Վճռաբեկ դատարանի համար ուղեցույց է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Մամադովն ընդդեմ Ադրբեջանի» գործով վճռի մեջ ամրագրված մոտեցումն այն մասին, որ «իշխանությունները պետք է ողջա-

միտ քայլեր ձեռնարկեն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցները: (...) **Դատաբժշկական ապացույցները ժամանակային առումով չապահովելը հանդիսանում է սույն գործով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու հիմնական գործոններից մեկը:** Ժամանակին կատարված բժշկական հետազոտությունը բժշկին հնարավորություն կտար վնասվածքների պատճառման ժամանակի և դրանց պատճառների վերաբերյալ առավել որոշակի եզրակացության հանգեցնել»¹⁶:

B. Equivalence suggests, that during the preliminary investigation, necessary proofs must be acquired, in the result of which it must be found out whether the activities, done by the competent bodies, have conformed with the existing legislation, risen from its requirements or not. In other words, the equivalence of the public-legal activity must be supplied with the situation. In the same time, it suggests, that in such cases, the person who has made a crime, must bear equivalent responsibility defined by law.

In the aim of providing equivalent investigation, the ECHR expressed the point of view, that if *the representative of the country is accused in such crimes, that involve tortures or inhuman treatment, it's too important to stop his labor commissions during the investigation and the lawsuit and in case of being sentenced they must be prohibited.*

1. In this respect, it's necessary, along with evoking criminal case, in the possible short time to discuss the question of temporary stopping the officiating of the suspected or the defendant who made the alleged torture.

Despite the fact, that according to requirement of the mentioned article, temporary stopping the officiating is used exclusively in respect of the suspected person or the defendant being in service, therefore,

⁷ see "Barabanshikov against Russia", the decision of 8th of January, 2009 of ECHR, point 49

we think, that such a measure can be a reasonable tool for solving the problems raised within examination.

What concerns to the public service, it must be noted, that according to the 1st part of the Article 3 of RA Law on "Public Service" *the public service is the realization of powers entitled by the Constitution of the Republic of Armenia and the laws to the country, which involves the state service....* And according to the 3rd part of the Article 3 of the same law, *state service involves the civil service, the judicial service, the diplomatic service, special services in republican executive bodies of Defense, National Security, the Police, Tax, Customs, Rescue Service, state service in the personnel of National Assembly of the Republic of Armenia, in the Council of National Security, as well as other services also anticipated by laws.*

At the same time, the Special Investigation Service of RA will regularly summarize the results of the investigation of such crimes, will submit offers on increasing the quality and productivity of the investigation, as well as on the development and prevention of measures directed to the abolition of the reasons of executing crimes of such a sort and the promoting conditions, in case of necessity, by the order anticipated by the article 200 of the Criminal Judicial Code of RA will submit solicitations to the correspondent subdivisions of RA competencies often specified in the applications about the torture, about undertaking measures for clarifying the circumstances promoting the execution of torture and abolishing them.

2. From the position of supporting legal guarantees of productivity and equivalence of the protection of the interests of the injured, it's necessary to use protection measures of the persons participating in the criminal proceedings anticipated by the Articles

98-99 of the Criminal Procedure Code of RA, which can essentially promote preventing exertion of different illegal repressions.

The Court of Cassation of RA also came on to the question of equivalence by the decision of February 12, 2010 on Arayik Gzoyan. Due to the procedural background of that case, Arayik Gzoyan was brought to the correspondent department of RA Police with a suspicion of selling drugs. During the interrogation A. Gzoyan announces, that the explanations given in the Police do not comply with reality, as he was beaten there, terroristic blasphemies and threats have been sounded in children's respect, as well as they hit his legs, kidneys and other parts of the body with rubber blackjacks, in the result of which the ear-drum of the left ear has been burst and he completely lost hearing of that ear, also lost several cheekteeth.

Based on that declaration of A. Gzoyan, as well as based on the application, submitted by the defender on subjecting him to torture, a service investigation has been appointed in the result of which the authority realized the service investigation in the made conclusion was limited by the discussion of not realizing fully the requirements of the sub-points 3 and 5 of the 2nd point of the decision on "rights subject to be notified, risen from the limitation of human rights and freedoms" of RA Government as of 14.06.2007, which is: not to record the fact of refusing the defendant by the brought Arayik Gzoyan, as well as, of the discussion of questions of informing to the person selected by the latter on the place of location of A.Gzoyan within three hours by the latter's demand from the moment of bringing to the Police, the question has also been proposed in the operative consultation of the Head of correspondent department of RA Police with the participation of the Police officer, who realized torture in his respect specified by Gzoyan.

As it is seen from the abovementioned quote, the authority who has realized service investigation, has not come on to A. Gzoyan's declaration on getting physical injuries, has not appointed forensic-medical expertise in the aim of checking it, whereas the forensic – medical expertise has an axial destination for the reasonable investigation of declarations on tortures.

In this respect, the approach fixed in the verdict on the case “Mamadov against Azerbaijan” by the European Court of Human Rights is a guideline for the Court of Cassation, as “The authorities must undertake reasonable steps to support the preservation of proofs concerning to the incident, including the forensic–medical proofs (...) **One of the main factors of realizing not reasonable investigation on the present case is a not providing the forensic medical proofs in time.** Medical examination done in time, would give the doctor a possibility to come into conclusion more particularly about the time of causing injuries and their reasons”.⁸

What refers to the present case the Court of Cassation of RA came to conclusion, that the decision made in the result of the service investigation, which is: “to discuss the question of the officer of the correspondent department of RA Police in the operative consultation of the head of that administration”, can't be evaluated as a dully response in respect of the torture fact. In this issue, The Court of Cassation of RA is based on the position of the European Court of Human Rights, due to which **the torture must be entailed to the criminal liability and punishment** (for more details see the verdict of June 3, 2004 Bati and Others v. Turkey, 2004, complaints number 33097/96 and 57834/00, points 145-146, Mikheev v. Russia, the

⁸ See the verdict of 11 January, 2007, “Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan”, complaint 34445/04, point 74:

verdict of 26 January, 2006, complaint number 77617/01, points 120 and 135).

Based on the above mentioned, The Court of Cassation concluded, that within preliminary investigation of this case no proper measures have been undertaken for checking A. Gzoyan's declaration concerning to physical and mental violence used in his respect and for inflicting liability to the alleged tortured person.

G. ***The social control*** suggests, that the preliminary investigation, and in the scopes of making decisions it must be open translucent and must be under the public control, of course not impeaching the principle of confidentiality preliminary investigation. In other words, the cooperation must be supported with several social organizations in respect to the equity of the activity of the state correspondent body, which must unconditionally be observed as a fundamental guarantee on torture cases for supporting objectivity of the realization of the preliminary investigation. At the same time, we think, that the mediation of the social organizations must be realized in the scopes of the requirements defined by law not breaking the injunctions defined by the material and procedural legislation.

The committee, in addition to the abovementioned, highlighted several requirements, particularly

1. The committee highlighted the urgent execution of the right to have advocate of correspondent persons, when they were given to the body realizing the proceedings. The committee highlights the mentioned circumstances from the point of view of excluding cases of torture, taking into consideration the fact, that in advocate's presence a rather serious legal guarantee is risen for preventing the possible infringements of the social relations directed to the protection of human health.

2. The committee also highlights specifically the video recording of the whole process of the interrogation, noting that in this case the degree of revelation of torture cases by the authority realizing the investigation, will substantially increase. At the same time, this is rather tamer-binding tools, which forms inner recognition at the authority, realizing the proceedings, that during the interrogation any realized activity is under the domain of video recording, and therefore, can be published. The mentioned fact realized a rather reasonable function of restraining, which is also a productive guarantee of the reasonable revelation of torture facts.

3. Some requirements are proposed concerning to the room furnishing anticipated for the realization of the interrogation. Particularly, it is offered to put the chairs of the interrogating and the interrogated person face to face, on equal degrees for not arising impression of making repression. In this case, in fact a psychological balance is supported between the participants of the interrogation, and the investigator is not an officer, who "aims to punish him and to find criminal stuff in his activities" in the scopes of the subjective perception of the interrogated person.

The compulsory execution of the present requirements of the Committee does not break and limit the investigator for making other investigation activities directed to the reasonable investigation on criminal cases examining by him.

So, summarizing the abovementioned, we offer to take into consideration the abovementioned legal analyses of the Committee, as well as of the European Court of Human Rights, while realizing preliminary investigation on criminal cases on torture, in the result of which will reasonably be supported the possible united legal- applied practice of qualifying and examining the deeds of this type.

APPENDIX 1

RECOMMENDATION

On organizing more reasonable investigation on criminal cases accused by the torture fact

For the goal of providing the execution of the requirements of organizing and realizing the investigation on torture affairs defined by the European Court of Human Rights, Decisions of The Court of Cassation of RA and The European Committee of Torture Prevention and following the 2nd point of the 2nd part of the Article 16 of RA Law on “Special Investigation Service”

I recommend

1. In respect of the reports on torture, to show special approach arranged by the Decisions of the European Court of Human Rights and the requirements of the European Committee of Torture Prevention, to evoke criminal case urgently in case of the existence of correspondent bases, executing fully, multilateral and impartial preliminary investigation and strictly highlighting the importance of executing the investigation activities on criminal case in possible short terms.

2. In case of forming an investigation group, not to involve the investigators of law enforcement bodies of RA in the form of the investigation group, where the person who has executed the alleged torture, has been served or serves.

3. In case of necessity to appoint forensic – medical and (or) forensic – psychological expertise in the scopes of the evoked criminal cases

for finding out the fact of violating in the injured person's respect and causing psychic suffering and in case of arising any suspicion about the injured person's perceiving on circumstances, which are liable to be found out on case, to appoint also forensic – psychiatric expertise.

4. In short terms, to discuss the question of temporally stopping the officiating of the criminal suspect or the defendant, who made the alleged torture by the order defined by law.

5. To undertake correspondent protection measures in respect of the participants of the proceedings, including the injured, anticipated by the article 98-99.1 of the Criminal Proceedings Law of RA

6. To the Deputy Heads of the Special Investigation Service of RA:

1) To register separately the cases on tortures, the process of their investigation.

2) To summarize the results of the investigation of crimes of this nature each semester, to submit proposals for increasing the quality and productivity of the investigation, as well as for the development and prevention of measures aimed to abolish the reasons of executing such kind of crimes and promoting conditions.

7. To the manager of the stuff of the Special Investigation Service of RA: to introduce the recommendation to the officers of the Special Investigation Service of RA.

8. To the Deputy heads of the Special Investigation Service of RA: to realize control in respect of the execution of the recommendation.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ

ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգրք) 119-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պաշտոնատար անձի կողմից կամ նրա համաձայնությամբ որևէ անձից տեղեկություններ, խոստովանություն կամ այլ տվյալներ կորզելու, այն արարքի համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ այլ անձը կամ նրան կամ այլ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Հոդված 2. Օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նույն արարքը, որը զուգորդվել է սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց նկատմամբ ծաղրուծանակով կամ այլ բռնությամբ, եթե արարքում բացակայում են խոշտանգման հատկանիշները պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ

տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 2

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ)

Սույն Կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

նկատի ունենալով 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

նկատի ունենալով, որ սույն Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,

կրկին հավաստելով իրենց խորին հավատը այդ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից,

համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին

քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին, համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 2. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողությունն ձեռնարկելու համար:

Հոդված 3. Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հոդված 4. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Սույն հոդվածի նպատակների համար ,պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝

ա. ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,

գ. ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

դ. սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

Հողված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմինն ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ

այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի ,գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Հոդված 6. Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչու-

թյամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի՝ դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Հոդված 7. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

Հոդված 8. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպ-

քերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 9. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Հոդված 10. Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության

և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Հոդված 11. Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հան-

ցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Հոդված 12. Ամուսնության իրավունք

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 13. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Հոդված 14. Խտրականության արգելում

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Հոդված 15. Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Հոդված 16. Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում

10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներում ոչինչ չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանա-

փակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար:

Հոդված 17. Իրավունքների չարաշահման արգելում

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

Հոդված 18. Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները

Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0176/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ՝ Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
մասնակցությամբ տուժող՝ Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արևիկ Հակոբի Սահակյանի և Ծովինար Հակոբի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի և տուժող Ա.Շահբազյանի վճռաբեկ բողոքները,

1. Գործի դատավարական նախապարմությունը

1. 2011 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արմավիրի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 48115110 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ Արևիկ Հակոբի Սահակյանը և Ծովինար Հակոբի Սահակյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: Նույն օրը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արմավիրի մարզի քննչական բաժնի քննիչի որոշումներով Արևիկ և Ծովինար Սահակյանների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: 2011 թվականի նոյեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան:

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռով Արևիկ Հակոբի Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով: Ծովինար Հակոբի Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով: Վճռվել է քաղաքացիական հայցը թողնել առանց քննության և տուժող Անահիտ Գևորգի Շահբազյանին իրավունք վերապահել ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանների պաշտպան Յ.Մարգարյանը: Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճիռը Արևիկ Հակոբի Սահակյանի և Ծովինար Հակոբի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով բեկանվել է: Արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ ամբաստանյալներ Արևիկ Հակոբի Սահակյանը և Ծովինար Հակոբի Սահակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ճանաչվել են անմեղ և արդարացվել են:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը և տուժող Ա.Շահբազյանը վճռաբեկ բողոքներ են

ներկայացրել, որոնք վճռաբեկ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի

համար. Արմավիրի մարզի Արմավիր գյուղի բնակչուհիներ Արևիկ և Ծովինար Հակոբի Սահակյանները իրենց մոր՝ Վալյա Հարությունյանի հետ բնակվել են իրենց հանգուցյալ հոր՝ Հակոբ Սահակյանի՝ Արմավիրի մարզի Արմավիր գյուղի տանը, որտեղ բնակվել է նաև Արևիկի և Ծովինարի հորաքույր Անահիտ Գևորգի Շահբազյանը: Հակոբ Սահակյանի մահվանից հետո երեխաների՝ Արևիկի և Ծովինարի և կնոջ՝ Վալյա Հարությունյանի հարաբերությունները հանգուցյալի քրոջ՝ Անահիտ Գևորգի Շահբազյանի հետ մշտապես եղել են լարված, միմյանց հետ հաճախ վիճաբանել են կենցաղային հարցերի շուրջ, դրա պատճառով Վալյա Հարությունյանն իր դուստրերի՝ Արևիկի և Ծովինարի հետ տեղափոխվել է եղբոր տուն: 2011թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 17-ի սահմաններում, Վալյա Հարությունյանն իր եղբորորդի Կոլյա Հայկի Հարությունյանի և նրա ընկեր Արմեն Սրապի Կնյազյանի հետ վերջինիս «ԶԻԼ» մականիշի ավտոմեքենայով գնացել են Արմավիրի մարզի Արմավիր գյուղ՝ իրենց իրերը տեղափոխելու նպատակով: Անահիտ Շահբազյանը, տեսնելով Վալյա Հարությունյանին, Արևիկ և Ծովինար Սահակյաններին, սկզբում արգելել է վերջիններիս մտնել տան բակ, այնուհետև սկսել է վիճաբանել նրանց հետ՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց իրերի հետ իր ապրանքներն էլ են ցանկացել տանել, և պոլիէթիլենային շիշը նետել է Արևիկ Սահակյանի ուղղությամբ: Այդ ժամանակ Վալյա Հարությունյանը, գտնվելով տանը, իրենց հագուստներն է դասավորել, իսկ աղջիկները՝ Արևիկը և Ծովինարը, իրերն են տեղափոխել և դրել «ԶԻԼ» ավտոմեքենայի մեջ: Այդ ընթացքում Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել Արևիկ և Ծովինար Սահակյաններին, որի պատճառով վիճաբանություն է սկսվել, և վերջիններս, ձեռքերով և ոտքերով հարվածելով, ծեծի են

ենթարկել Անահիտ Շահբազյանին: Վալյա Հարությունյանը, բակից վիճաբանության ծայներ լսելով, դուրս է եկել տանից ու դուստրերի հետ միասին հեռացել են այդտեղից (տես քրեական գործ, հատոր 1, թերթ 66, 75, 95):

6. Առաջին ատյանի դատարանում Արևիկ և Ծովինար Սահակյանները ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր չեն ճանաչել և նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ իրոք իրենց հոր՝ Հակոբ Սահակյանի մահից հետո իրենց մոր՝ Վալյա Հարությունյանի հետ բնակվել են իրենց հայրական տանը, սակայն հորաքրոջ՝ Անահիտ Շահբազյանի հետ ունեցել են մշտապես լարված հարաբերություններ, հաճախ են վիճել կենցաղային հարցերի շուրջ, այդ պատճառով նրանք տեղափոխվել են Արմավիր քաղաքում բնակվող իրենց մորեղբոր տուն: 2011 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 17-ի սահմաններում, իրենց մորեղբոր որդի Կոլյա Հայկի Հարությունյանի և նրա ընկեր Արմեն Սրապի Կնյազյանի հետ վերջինիս «ԶԻԼ» մականիշի ավտոմեքենայով գնացել են Արմավիրի մարզի Արմավիր գյուղ՝ իրենց իրերը վարձակալած բնակարան տեղափոխելու նպատակով: Անահիտ Շահբազյանը սկզբում արգելել է իրենց մտնել տան բակ, այնուհետև սկսել է վիճաբանել իրենց հետ՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց իրերի հետ իր ապրանքներն էլ են ցանկացել տանել և հեղուկով լցված պոլիէթիլենային շիշը նետել է Արևիկ Սահակյանի ուղղությամբ, սակայն վերջինիս չի դիպել: Երբ իրենք իրերն են տեղափոխել և դրել «ԶԻԼ» ավտոմեքենայի մեջ, Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել, որի ժամանակ իրենց միջև վիճաբանություն է սկսվել, իսկ Ծովինար Սահակյանը հրել է Անահիտ Շահբազյանին: Այնուհետև իրենց մայրը՝ Վալյա

Հարությունյանը, բակից վիճաբանության ճայներ լսելով, դուրս է եկել տանից ու միասին հեռացել են այդտեղից:

Իրենք Անահիտ Շահբազյանին չեն հարվածել, չեն ծեծել ու մարմնական վնասվածքներ չեն պատճառել, միայն Ծովինար Սահակյանն է հրել նրան՝ սաստելու համար(տես քրեական գործ հատոր 1, թերթ 187):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Քրեական պատասխանատվության հիմքի, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, քրեական դատավարության օրենսդրության խնդիրների, օրինականության, անմեղության կանխավարկածի, ապացույցների, դրանց ստուգման, իրավական գնահատության, ապացուցման ենթական հանգամանքների վերաբերյալ ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրության վերոհիշյալ հիմնարար իրավադրույթների պահանջների համատեքստում քննության առնելով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված ճանաչված փաստական հանգամանքները առ այն, որ ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանները 2011թ. օգոստոսի 10-ին՝ ժամը 17.00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Արմավիր գյուղում բնակվող իրենց հորաքույր՝ գործով տուժող Անահիտ Գևորգի Շահբազյանի տան բակում, իրենց գույքը տեղափոխելու ժամանակ վիճաբանել են վերջինիս հետ, որի ընթացքում դիտավորությամբ հարվածներ են հասցրել և ծեծի ենթարկել Անահիտ Շահբազյանին, և Ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով վերը նշված փաստական հանգամանքների հիմքում դրված ապացույցները, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ Ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի հիմ-

քում դրված ապացույցներով հնարավոր չէ հիմնավորված համարելու ամբաստանյալներ Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, մասնավորապես, դրա օբյեկտիվ կողմը:

Դատաբժշկական փորձագետի թիվ 231 եզրակացությամբ ամրագրվել է տուժող Ա.Շահբազյանի ստացած ոչ թե «մարմնական վնասվածքները», այլ «մարմնական վնասվածքը»: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալները և նկատի ունենալով, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատաքննությամբ չհաստատվեց ամբաստանյալներ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի կողմից տուժող Ա. Շահբազյանին երեք և ավելի անգամներ հարվածելու փաստը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշն է, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը, արտահայտելով միայն իրավունքի շահերը, գործի հան-գամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված համոզմամբ հանգում է այն հետևության, որ տուժողի ցուցմունքներն արժանահավատ չեն, նա նպատակ է հետապնդում կենցաղային հողի վրա առաջացած վեճի հետևանքով, իր իսկ հակասական ցուցմունքների վրա ամբաստանյալի կարգավիճակում հայտնված Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով պատժելու, նրա՝ որպես շահագրգիռ անձի ցուցմունքները բավարար չեն ամբաստանյալի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով որակելու համար» (տես քրեական գործ հատոր 2, թերթ 83, 85, 86):

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները

8. Բողոքաբերը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը, նշել է, որ սույն գործով առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ հոդվածների և 397-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, մասնավորապես, ճիշտ չի գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ճիշտ չի կիրառել նյութական օրենքը, ինչի արդյունքում հանցանք կատարած երկու անձինք անհիմն ազատվել են քրեական պատասխանատվությունից և պատժից: Բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծեծելու կամ այլ բռնի գործողություններ կատարելու համար, որը չի առաջացրել նույն օրենսգրքի 117-րդ հոդվածով («Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը») նախատեսված հետևանքները, և եզրակացություն արել այն մասին, որ հաստատված չհամարելով ամբաստանյալների կողմից տուժողին բազմաթիվ հարվածներ հասցնելու հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության ամբաստանյալների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի

օբյեկտիվ կողմի բացակայության վերաբերյալ: Բողոք բերած անձի պնդմամբ ծեծը ենթադրում է գործողությունների պարբերականություն, իսկ նույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված «բռնի գործողություններ»-ը ներառում են անձին ֆիզիկական ցավ պատճառած մեկ հարվածը: Որպես նման «բռնի գործողություններ»-ի օրինակ՝ բողոք բերած անձը նշել է նաև կճմտելը, մազերը քաշելը և այլն:

10. Բողոքաբերը փաստարկել է, որ ծեծի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունից երևում է, որ ծեծին քրեաիրավական գնահատական տալու և, հետևաբար, նշված հոդվածի կիրառման հարցում տարատեսակ մոտեցումներ են ցուցաբերվում: Մասնավորապես, ամբաստանյալի կողմից տուժողին մեկ հարված հասցնելու պարագայում դատարանները որոշ դեպքերում կայացրել են մեղադրական, այլ դեպքերում՝ արդարացման դատավճիռներ: Արդյունքում, բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ ծեծի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի կապակցությամբ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռին:

12. Բողոքաբերը տուժող Անահիտ Շահբազյանը, նշել է, որ սույն գործով վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մենաբանել ՀՀ քրեական

օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիան: Ուստի, խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պաթճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքները վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծեծի համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. Ծեծի համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը.

14. Նախքան սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքներում բարձրացված իրավական հարցերին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը՝ վերհանելով հատկապես դրա օբյեկտի, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի մի շարք առանձ-

Նահատկություններ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ սույն գործով ներկայացված բողոքներում բարձրացված հարցերը քննելիս:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծեծելու կամ այլ բռնի գործողություններ կատարելու համար, որը չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով («Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը») նախատեսված հետևանքներ: Մեջբերված քրեաիրավական դրույթը ներառված է մարդու դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ բաժնի՝ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող 16-րդ գլխում: Նշված գլխում ներառված առողջության դեմ հանցագործությունները հանրորեն վտանգավոր այն արարքներն են, որոնք ուղղված են մարդու առողջության դեմ:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը մարդու առողջությունն է, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ նաև մարդու պատիվն ու արժանապատվությունը:

Առողջությունը մարդու օրգանիզմի այնպիսի ֆիզիոլոգիական վիճակն է, երբ դրա բոլոր համակարգերը, մասերը և օրգանները նորմալ գործում են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության պրեամբուլայում առողջությունը բնորոշվում է որպես «ֆիզիկական, հոգևոր և սոցիալական լրիվ բարօրության վիճակ և ոչ թե միայն հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայություն»:

Առողջության դեմ ուղղված ոտնձգության հետևանքով վնաս է պատճառվում անձի առողջությանը, խախտվում են անձի ինչպես ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ նրա առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Քրեաիրավական պաշտպանության օբյեկտի տեսանկյունից առողջությունը ոչ նյութական բարիք է, որը, ընդհանուր կանոնի համաձայն, բնորոշվում է որպես մարդու ֆիզիկական և հոգեկան բարօրության վիճակ: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական օրենքը պաշտպանում է ոչ թե առողջության իդեալական վիճակը, այն է՝ անձի ֆիզիկական և հոգեկան լրիվ բարօրության վիճակը, այլ անձի այն առողջական վիճակը, որն առկա է եղել նրա նկատմամբ հանցավոր ոտնձգություն կատարելու պահին: Հետևաբար, «առողջության դեմ ուղղված» հասկացությունն անհրաժեշտ է մեկնաբանել՝ ելնելով ինչպես Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության պրեամբուլայում առողջությանը տրված ընդհանուր բնորոշումից, այնպես էլ այն անձի մոտ օբյեկտիվորեն առկա առողջական վիճակից, ում նկատմամբ կատարվել է հանցավոր ոտնձգությունը: Ինչ վերաբերում է 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության լրացուցիչ օբյեկտին՝ արժանապատվությանը, ապա այն հանդիսանում է մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էության, անհրաժեշտ և անքակտելի հատկանիշ, որի հիման վրա մարդը դառնում է սոցիալական կենսագործունեության լիիրավ սուբյեկտ:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է՝

ա) տուժողին ֆիզիկական ցավ պատճառելով,

բ) տուժողի նկատմամբ այլ բռնի գործողություններ կատա-

րելով, որոնք չեն պարունակում դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ:

Նշված արարքների հետևանքով տուժողի ֆիզիկական վիճակը բացասական փոփոխությունների է ենթարկվում, որոնք բնորոշվում են որպես «առողջության դեմ ուղղված» ոտնձգության հետևանք: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում նշվում է ծեծելու կամ այնպիսի այլ բռնի գործողություններ կատարելու մասին, որոնք չեն պարունակում դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ, այնուամենայնիվ այն հանդիսանում է մարդու առողջության դեմ ուղղված ոտնձգություն, որը օժտված է հանրային վտանգավորության որոշակի բնույթով և աստիճանով:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այն դեպքերում, երբ կիրառված բռնության հետևանքով տուժողի հոգեկան վիճակը բացասական փոփոխությունների է ենթարկվում, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով («Խոշտանգում»):

18. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածում առկա՝ «այլ բռնի գործողություններ» ձևակերպմանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհրաժեշտ է մեկնաբանել «բռնություն» հասկացության համատեքստում: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում նկարագրված են բռնության տարբեր դրսևորումներ, որոնց թվին են դասվում ծեծը, խոշտանգումը և ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում որպես ինքնուրույն հանցակազմ կամ հանցակազմի որակյալ հատկանիշ կամ հանցանքի կատարման եղանակ նախատեսված բռնի այլ գործողությունները, որոնք

նկարագրված են որպես բռնության կիրառում, բռնության սպառնալիք, այլ բռնություն, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, ֆիզիկական ցավ, ուժեղ ցավ, հոգեբանական բռնություն և այլն:

Վերագրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

19. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության համատեքստում մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիան՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծեծը կամ այլ բռնի գործողությունները բռնության տարատեսակներ են, որոնք կարող են դրսևորվել ֆիզիկական բռնությամբ: Հոգեբանական բռնության դեպքում արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

19.1. Ծեծելը բնութագրվում է տուժողի մարմնին հարվածներ հասցնելով, ընդ որում, հարվածները կարող են հասցվել ինչպես ձեռքերով կամ ոտքերով, այնպես էլ բուռ և կոշտ գործիքի գործադրմամբ՝ բազմաթիվ (մեկից ավելի) անգամ:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ մեկնաբանության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում օգտագործված

«Ծեծել» եզրույթը ներկայացված է հոգնակի թվով, այսինքն՝ ոչ թե որպես մեկ, այլ բազմակի (մեկից ավելի) ակտ: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով արգելված ծեծի բովանդակությունից հետևում է, որ ծեծը տուժողին բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է, որի արդյունքում նրան պատճառվել է ֆիզիկական ցավ:

19.2. Այլ բռնի գործողություններ են, օրինակ՝ ձեռքերը ոլորելը, մազերը քաշելը, կմնթելը և այլն:

20. Ծեծի կամ այլ բռնի գործողությունների մասին կարող են վկայել անձի վրա արյան զեղումների, քերծվածքների, կապտուկների և այլնմանատիպ դրսևորումների առկայությունը: Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ծեծի կամ այլ բռնի գործողությունների արդյունքում անձի մարմնի վրա կարող է որևէ տեսանելի հետք չմնալ: Այն դեպքում, երբ ծեծի կամ այլ բռնի գործողությունների հետևանքով տուժողի մարմնի վրա մնում են տեսանելի հետքեր, դրանք գնահատվում են ըստ ծանրության աստիճանի՝ ընդհանուր կանոններին համապատասխան: Գնահատումը տվյալ դեպքում իրականացվում է պատճառված վնասի ծանրության աստիճանի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա: Այն դեպքում, երբ ծեծի կամ այլ բռնի գործողությունների արդյունքում անձի մարմնի վրա որևէ տեսանելի հետք չի մնացել և դրանց հետևանքով անձին, օրինակ՝ ֆիզիկական ցավ է պատճառվել կամ դրանք անձի թեթև տկարության պատճառ են հանդիսացել, դատաբժշկական փորձագետն արձանագրում է տուժողի սուբյեկտիվ գանգատները՝ նշելով, որ վնասվածքների տեսանելի հետքերը բացակայում են, և չի որոշում առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանը: Նման դեպքերում ծեծի

կամ բռնի այլ գործողություն կատարելու, մասնավորապես՝ տուժողին ֆիզիկական ցավ պատճառելու հանգամանքի բացահայտումն ամբողջովին դրված է վարույթն իրականացնող մարմնի վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի ճիշտ որակումը կոնկրետ հանրորեն վտանգավոր արարքի մեջ հանցակազմի բոլոր հատկանիշների առկայության հավաստումն է: Հետևաբար, քրեական վարույթն իրականացնող մարմնի խնդիրն է բացահայտել այն հատկանիշները, տարրերը, որոնք կազմում են տվյալ տեսակի հանցագործության օրենսդրական մոդելը կամ որ նույնն է՝ հանցակազմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով գործի քննության ժամանակ վարույթն իրականացնող մարմինը պետք է ուշադրություն դարձնի և պատշաճ իրավական գնահատության արժանացնի վկաների, տուժողի, ամբաստանյալների ցուցմունքները և գործի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք թույլ կտան սահմանազատել նախ՝ հանցավոր արարքը ոչ հանցավոր արարքից, ապա քրեորեն հետապնդելի մի արարքը մյուս արարքից և դրանց ճիշտ քրեաիրավական գնահատական տալ:

21. Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, այլ խոսքով՝ քննարկվող հանցակազմով նախատեսված ֆիզիկական բռնությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծեծը կամ բռնի այլ գործողությունները

կարող են այլ հանցագործությունների հատկանիշներ պարունակել կամ դրանց կատարման միջոց լինել: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը այլ հանցագործություններից սահմանազատելու համար անհրաժեշտ է պարզել հանցավորի դիտավորության ուղղվածությունը և գործի կոնկրետ հանգամանքները և ըստ այդմ էլ որոշել, թե արարքը քրեական օրենքով պաշտպանվող որ օբյեկտի դեմ է ուղղված: Օրինակ, եթե խուլիգանության ժամանակ հանցավորի արարքը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ապա այն այլ հատկանիշների առկայության դեպքում պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով («Խուլիգանություն»): Կամ անձի կյանքի կամ առողջության համար բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի («Ավազակությունը») պարտադիր հատկանիշ է, իսկ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը կողոպուտի պարտադիր հատկանիշ է (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված) և այլն:

Ինչ վերաբերում է ծեծի կամ այլ բռնի գործողությունների շարժառիթին ու նպատակին, ապա դրանք կարող են տարբեր լինել և արարքի որակման վրա չեն ազդում:

II. Մեկ հարվածի քրեաիրավական նշանակությունը և հետևանքները.

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. կարո՞ղ է արդյոք մեկ հարվածը որակվել որպես ծեծ:

23. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «(...) «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց»:

Վերոշարադրյալ, ինչպես նաև մի շարք այլ միջազգային-իրավական դրույթներ Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել Ա.Գզոյանի գործով կայացված որոշման

մեջ, որտեղ ընդգծվել է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի բացարձակ բնույթը (տե՛ս mutatis mutandis Արայիկ Էդուարդի Գզոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԲԴ/0049/01/09 որոշումը):

24. Սույն որոշման նախորդ կետում մեջքերված դրույթների, մասնավորապես՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի վերլուծությունից երևում է, որ այն կիրառում է «մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք» ձևակերպումը: Նշված ձևակերպումը համադրելով սույն որոշման 18-րդ կետում մեկնաբանված «բռնություն» հասկացության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնության արդյունքում անձին ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է պատճառվում, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով չեն կարող որակվել այն դեպքերը, երբ անձին ֆիզիկական ցավ չի պատճառվում:

Միևնույն ժամանակ ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը պատասխանատվություն է առաջացնում ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով: Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրակացությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ եթե արարքը փաստացի չի առաջացրել ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք և այդպիսիք պատճառելու դիտավորյալմբ չի բնութագրվում, իր նվազ կարևորության պատճառով չի կարող հանցագործություն համարվել (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս):

25. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոշարադրյալ եզրահանգումը հաստատվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ («Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը») և 119-րդ («Խոշտանգումը») հոդվածների կառուցվածքային և բովանդակային համեմատությամբ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում, կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ:

ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածում խոշտանգումը բնորոշվում է որպես ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ («Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը») և 113-րդ («Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը») հոդվածներով նախատեսված հետևանքներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ և 119-րդ հոդվածներում նախատեսված հանցագործությունների պարտադիր հատկանիշներից մեկը ֆիզիկական ցավի առկայությունն է: Նշված հոդվածների տարբերությունը պատճառված վնասի աստիճանն է: Մասնավորապես՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշի բացակայության, ինչպես նաև այն դեպքում, երբ անձին պատճառվել է ֆիզիկական ցավ, արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ուժեղ

ցավ, մարմնական կամ հոգեկան տառապանք պատճառելու դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց ֆիզիկական ցավի մեկ հարվածը որպես այլ բռնի գործողություններ որակելը ճիշտ չէ, քանի որ օբյեկտիվ կողմի տեսանկյունից հարված հասցնելը և այլ բռնի գործողությունները իրարից տարբերվում են, այդ եզրույթները նույնացնելու, ինչպես լեզվաբացատրական, այնպես էլ քրեաիրավական հիմքեր չկան: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ծեծը ենթադրում է տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հնարավոր են դեպքեր, երբ մեկ հարվածն ավելի ուժգին լինի, քան մի քանիսը: Հարվածների քանակը արարքը որակելու դեպքում էական նշանակություն ունի միայն այն դեպքում, երբ դրա հետևանքով որևէ հանցակազմի հատկանիշ համարվող ֆիզիկական վնաս չի առաջացել: Այսինքն՝ մեկ հարվածը, եթե առաջացնում է, օրինակ՝ առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս, ապա որակվում է ըստ փաստացի վրա հասած հետևանքի, իսկ այն դեպ քում, երբ մեկ հարվածը ֆիզիկական ցավ կամ ֆիզիկական տառապանք չի պատճառել և այդպիսիք պատճառելու դիտավորյալ չի բնութագրվում, ապա իր նվազ կարևորության պատճառով այն չի կարող հանցագործություն համարվել:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մեկ հարվածով ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու կամ այդպիսիք պատճառելու դիտավորության առկայության հանգամանքը գնահատելիս

անհրաժեշտ է հաշվի առնել տուժողի տարիքը, առողջական վիճակը, ինչպես նաև հանցավորի ֆիզիկական տվյալները, հարվածի տեղակայումը, բնույթը և այլ հանգամանքները, որոնք իրենց համակցությամբ կարող են վկայել, որ տուժողին պատճառվել է ֆիզիկական ցավ:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 23-26-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեկ հարվածը չի կարող որակվել որպես ծեծ, ծեծը ենթադրում է տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը, որոնցարդյունքում տուժողին ֆիզիկական ցավ է պատճառվել: Հետևաբար, տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը, որոնց արդյունքում տուժողին ֆիզիկական ցավ չի պատճառվել, ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ որպես ծեծ:

Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողին մեկ անգամ ուժեղ ցավ պատճառելը կամ պարբերաբար մեկական հարված հասցնելը, անկախ հարվածի ուժգնությունից, կարող է որակվել որպես խոշտանգում (ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդված), եթե հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով անձին դիտավորյալ կերպով պատճառել է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեկ հարվածը, որը չի որակվում որպես ծեծ և հետևաբար, քրեաիրավական պատասխանատվության չի հանգեցնում, կարող է քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացնել, եթե դրանով նվաստացվի անձի պատիվն ու արժանապատվությունը:

III. Ամբաստանյալներին մեղսագրված արարքի քրեա-իրավական գնահատականը.

28. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված ապացույցներով հնարավոր չէ հիմնավորված համարել ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունը:

29. Ա.Պապյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի

այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հա-կաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն (տե՛ս Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ կետը):

Գ.Ճաղարյանի և այլոց գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցա-կարգի գործունեությունը: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է, և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը:

Քրեական դատավարությունում մեղադրանքը բնորոշվում է որպես կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգա-մանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը

և դրա իրավաբանական որակումը: (...) (...) համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Ավելին, մեղադրական եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր, մասնավորապես, արարքի փաստական նկարագրությունը, այդ նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, վճռորոշ նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար: (...) (...) գնահատելով մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: Նույն կերպ անընդունելի է, երբ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարված լինելու դեպքում հանցակիցների ներկայացվում է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու

Նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ գործողությունները, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը: (...) (...) հանցակիցներից յուրաքանչյուրի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս անհրաժեշտ է հաստատել, որ նա մասնակցել է այնպիսի հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը, որն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում և որի կապակցությամբ հաստատված է նրա մեղքը: Այլ խոսքով՝ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս նրանցից յուրաքանչյուրի արարքը պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ մյուս բոլոր հանցակիցների հետ համակցության մեջ՝ պարզելով հանցակիցներից յուրաքանչյուրի արարքի հանրային վտանգավորությունն ու հակաիրավականությունը և հետևաբար նաև հանցակիցներից յուրաքանչյուրի արարքում հանցագործության հատկանիշների և քրեական պատասխանատվության հիմքերի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի և գնահատի հանցակիցների կողմից համատեղ կատարված բոլոր արարքները, ինչպես նաև այդ արարքների հետևանքները՝ արդյունքում ուրվագծելով հանցակիցներից յուրաքանչյուրի՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու սահմաններն ու ծավալները (տե՛ս Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 15-րդ, 19-րդ, 21-րդ և 24-րդ կետերը):

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Արևիկ և Ծովինար

Սահակյաններին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում առկա է հետևյալ ձևակերպումը՝ «Այդ ընթաց-քում Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել Արևիկ և Ծովինար Սահակյաններին, որի պատճառով վիճաբանություն է սկսվել և վերջիններս ձեռքերով և ոտքերով հարվածելով ծեծի են ենթարկել Անահիտ Շահբազյանին» (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Առաջին ատյանի դատարանում Արևիկ և Ծովինար Սահակյանները նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ Անահիտ Շահբազյանը սկզբում արգելել է իրենց մտնել տան բակ, այնուհետև սկսել է վիճաբանել իրենց հետ՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց իրերի հետ իր ապրանքներն էլ են ցանկացել տանել, և հեղուկով լցված պոլիէթիլենային շիշը նետել է Արևիկ Սահակյանի ուղղությամբ, սակայն վերջինիս չի դիպել: Երբ իրենք իրերն են տեղափոխել և դրել «ԶԻԼ» ավտոմեքենայի մեջ, Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել, որի ժամանակ իրենց միջև վիճաբանություն է սկսվել, իսկ Ծովինար Սահակյանը հրել է Անահիտ Շահբազյանին: Այնուհետև իրենց մայրը՝ Վալյա Հարությունյանը, բակից վիճաբանության ձայներ լսելով, դուրս է եկել տանից ու միասին հեռացել են այդտեղից: Իրենք Անահիտ Շահբազյանին չեն հարվածել, չեն ծեծել ու մարմնական վնասվածքներ չեն պատճառել, միայն Ծովինար Սահակյանն է հրել նրան՝ սաստելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ արձանագրել է, որ «Ընդհանուր իրավասությանդատարանի դատավճռի հիմքում դրված

ապացույցներով կամ գոնե դրանց որոշակի համակցությամբ հնարավոր չէ միանշանակորեն հիմնավորված համարելու ամբաստանյալներ Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, մասնավորապես, դրա օբյեկտիվ կողմը:

Դատաբժշկական փորձագետի թիվ 231 եզրակացությամբ ամրագրվել է տուժող Ա.Շահբազյանի ստացած ոչ թե «մարմնական վնասվածքները», այլ «մարմնական վնասվածքը»:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալները և նկատի ունենալով, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատաքննությամբ չհաստատվեց ամբաստանյալներ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի կողմից տուժող Ա. Շահբազյանին երեք և ավելի անգամներ հարվածելու փաստը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշն է, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը, արտահայտելով միայն իրավունքի շահերը, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված համոզմամբ հանգում է այն հետևության, որ տուժողի ցուցմունքներն արժանահավատ չեն, նա նպատակ է հետապնդում կենցաղային հողի վրա առաջացած վեճի հետևանքով, իր իսկ հակասական ցուցմունքների վրա ամբաստանյալի կարգավիճակում հայտնված Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով պատժելու, նրա՝ որպես շահագրգիռ անձի ցուցմունքները բավարար չեն ամբաստանյալի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով որակելու համար» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

31. Սույն որոշման 29-րդ կետում շարադրված դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 30-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից սույն գործով ամբաստանյալներին առաջադրվել է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու ենթադրյալ հանցավոր արարքին նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը: Ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե նրանցից յուրաքանչյուրին մեղսագրված արարքն ինչպես է դրսևորվել և ինչու է արտահայտվել, նրանցից ով է հարվածել տուժողին և քանի անգամ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում չի ապահովվել քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձանց իրավունքը տեղեկանալու իրենց դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, հետևաբար չի ապահովվել նաև ամբաստանյալների պաշտպանության իրավունքի իրականացումը, որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրականացման պահանջները բավարարող երաշխիք: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում, երբ յուրաքանչյուր հանցակցի մասով իրավախախտման փաստը կոնկրետացված չէ, իսկ դրա հանգամանքներն անհատականացված չեն, հնարավոր չէ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան պարզել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված

քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հանցակիցների մեղավորության աստիճանը և քրեաիրավական նշանակություն ունեցող այլ հարցերի ճիշտ լուծումը:

32. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

ա) նախաքննական մարմինը բավարար ապացույցներ չի ներկայացրել տուժողին մեկից ավելի անգամ հարվածներ հասցնելու վերաբերյալ,

բ) նախաքննական մարմնի կողմից ներկայացված մեղադրանքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով հստակեցված չէ, նախաքննական մարմինը դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվել է միայն տվյալ արարքով արգելված հանցակազմի ընդհանրական նկարագրությամբ:

33. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը հանդես չի գալիս

մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտա-հայտում և միայն իրավունքի շահերը»:

Սույն գործով, փաստորեն, չի հաստատվել ամբաստանյալներ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի կողմից տուժող Ա.Շահբազյանին մեկից ավելի անգամ հարվածելու փաստը, ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է համարել ապացուցված միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված, փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, բոլոր կասկածները ամբաստանյալի օգտին փարատելով, միանշանակորեն հիմնավորվի յուրաքանչյուր ամբաստանյալի կատարած բոլոր գործողությունները՝ հասցված հարվածների քանակը, ինչով են դրանք հասցվել, տուժողի մարմնի որ մասերին, ինչը սույն գործով առկա չէ:

34. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված ապացույցներով հնարավոր չէ հիմնավորված համարել ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս առումով Վերաքննիչ դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 25-րդ, 35-րդ, 124-127-րդ, 358-րդ և 365-րդ պահանջները, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ:

Անդրադառնալով բողոքաբեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի այն փաստարկին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում նախատեսված «այլ բռնի գործողություններ» ձևակերպումն իրենում ներառում է նաև անձին հասցված մեկ հարվածը, որը ֆիզիկական ցավ է պատճառում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ մեկ հարվածը չի կարող նույնացվել այլ բռնի գործողությունների հետ (տե՛ս սույն որոշման 22-27-րդ կետերը):

35. Հիմք ընդունելով սույն որոշման 14-34-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքներում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ փաստարկները (տե՛ս սույն որոշման 8-12-րդ կետերը) իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքները պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: Արևիկ Հակոբի Սահակյանին և Ծովինար Հակոբի Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ անմեղ ճանաչելու և արդարացնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի

2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն

Դատավորներ՝ ստորագրություններ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2007 թվականի N 818-Ն

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԽՈՂ՝ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում հաստատել մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրության և մարդու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին գրավոր ծանուցման ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ց Ա Ն Կ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԻՈՂ՝ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

1. Մարդու իրավունքները սահմանափակելիս՝ մարդն իրավունք ունի՝

1) սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով հատուցում ստանալու իրեն պատկանող տրանսպորտային կամ այլ միջոցներին՝ ոստիկանության ծառայողի կողմից օգտագործման հետևանքով պատճառված վնասի համար:

2. Մարդու ազատությունները սահմանափակելիս՝ մարդն իրավունք ունի՝

1) սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, իր ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.

2) ստանալու իրավաբանական օգնություն.

3) բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց.

4) ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին.

5) պահանջելու, որպեսզի ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում իր գտնվելու վայրի մասին տեղեկացվի իր կողմից ընտրված անձին.

6) անհրաժեշտության դեպքում ստանալու բժշկական օգնություն.

7) պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով.

8) ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, ոստիկանության գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադասության կարգով կամ դատախազին կամ դատարան.

9) ոստիկանություն բերվելիս՝ իր պահանջով ստանալու իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում.

10) պահանջելու, որպեսզի իրեն թույլ տան օգտվելու իր իրավունքներից՝ դրա մասին գրավոր դիմելով իր ազատությունը սահմանափակած ոստիկանության ծառայողին:

Կ Ա Ր Գ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԻՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին մարդուն ծանուցելու ընթացակարգը:

2. Մարդու իրավունքը սահմանափակելիս՝ ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը, և բանավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N -Ն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի (այսուհետ՝ ցանկ) 1-ին կետով նախատեսված իրավունքները:

3. Մարդու իրավունքները սահմանափակելիս՝ իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրություն չի կազմվում:

4. Մարդու ազատությունը սահմանափակելիս՝ ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը, և բանավոր ծանուցում է ցանկի 2-րդ կետով նախատեսված իրավունքների մասին:

5. Մարդուն ոստիկանություն բերելուց անմիջապես հետո կազմվում է իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրություն, որում նշվում են արձանագրությունը կազմող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, ծանուցման վայրը, ժամանակը, այն մարդու անունը, ազգանունը, ում ազատությունը սահմանափակվել է, սահմանափակման պատճառը, այն իրավական ակտը, որի հիման վրա ազատությունը սահմանափակվել է, նշում ազատության սահմանափակումից բխող իրավունքների ծանուցման փաստի,

իրավունքների իրականացման կարգի պարզաբանման մասին: Արձանագրությունն ստորագրվում է ոստիկանության ծառայողի և այն անձի կողմից, ում ազատությունը սահմանափակվել է: Վերջինիս է տրամադրվում արձանագրության մեկ օրինակը: Արձանագրության ստորագրումից անձի հրաժարվելու դեպքում այն ստորագրում է ոստիկանության ծառայողը՝ արձանագրության մեջ նշելով հրաժարման մասին:

6. Մարդուն՝ իր ցանկության դեպքում տրվում է գրավոր ծանուցում և դրա մասին նշվում է սույն կարգի 5-րդ կետով նախատեսված արձանագրության մեջ: Եթե մարդը չի տիրապետում հայերենին, ապա գրավոր ծանուցումը տրվում է նրան հասկանալի լեզվով: Գրավոր ծանուցման մեջ նշվում են ծանուցվողի անունը, ազգանունը, ազատությունը սահմանափակելու պատճառը, այն իրավական ակտը, որի հիման վրա ազատությունը սահմանափակվել է, ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, ցանկի 2-րդ կետով նախատեսված իրավունքները, ծանուցման օրը, ամիսը և ամսաթիվը: Գրավոր ծանուցումն ստորագրում է ծանուցող ոստիկանության ծառայողը՝ նշելով իր պաշտոնը, կոչումը, ազգանունը:

7. Ցանկով նախատեսված իրավունքների մասին գրավոր ծանուցումը ոստիկանության ծառայողին չի ազատում օրենքով նախատեսված այլ իրավունքների մասին մարդուն ծանուցելու պարտականությունից:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հունիսի 2008 թվականի N 574-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգով (այսուհետ՝ կանոնակարգ) կարգավորվում են ձերբակալված անձանց (այսուհետ՝ ձերբակալվածներ) ձերբակալվածներին պահելու վայրերում (այսուհետ՝ ՁՊՎ) ընդունելու հիմքերն ու կարգը, ձերբակալվածների նյութակենցաղային ապահովումը, ձերբակալվածների սնունդը և նրանց կողմից սննդից հրաժարվելու դեպքում ձեռնարկվող միջոցառումները, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների վարքագծի կանոնները, ՁՊՎ-ի օրվա կարգացուցակը, ձերբակալվածների կողմից առաջարկներ, դիմումներ և բողոքներ ներկայացնելը, պաշտպանի և մերձավոր ազգականի հետ տեսակցելը, հանձնույններ ընդունելը և հանձնելը, ձերբակալվածների բացօթյա զբոսանքը, ՁՊՎ-ում ներքին անվտանգության ապահովումը, ՁՊՎ-ի շինարարության և սարքավորման առանձնահատկությունները, ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակի կանոնակարգը, ՁՊՎ-ում կանանց և անչափահասներին պահելու պայմանների առանձնահատկությունները, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների նյութական պատասխանատվությունը, քննչական գործողություններին ձերբակալ-

վածների մասնակցությունն ապահովելը, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների բուժսպասարկումը և հակահամաճարակային պայմանների ապահովումը և ձերբակալվածներին ՁՊՎ-ից ազատելու հիմքերը և կարգը:

2. Սույն կանոնակարգի պահանջները պարտադիր են ՁՊՎ-ի վարչակազմի և այնտեղ պահվող անձանց համար:

3. Սույն կանոնակարգի խախտումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

4. Ձերբակալվածներին ՁՊՎ-ում արգելանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, քաղաքացիների օրենքի առջև հավասարության, մարդասիրության և անձի իրավունքները և ազատությունները, մարդկային արժանապատվությունը հարգելու սկզբունքին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և տևողությամբ ՁՊՎ-ում կարող են պահվել նաև կալանավորված անձինք՝ կալանավորվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգով սահմանված կարգով և պայմաններում:

6. Սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու պարտականությունները դրվում են ոստիկանության տարածքային բաժինների պետերի (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետի) կամ նրանց փոխարինող անձանց վրա:

II. ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

7. Ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքով սահմանված կարգով կազմված ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը: Իսկ կալանավորվածներին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քննիչի, դատախազի կամ դատավորի որոշումը:

8. ՁՊՎ չեն ընդունվում այն անձինք, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշումը կամ ձերբակալման արձանագրությունը, կամ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումը լրացված են խախտումներով:

9. Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձի ձերբակալման ժամկետը հաշվվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

10. Տարանցիկ փոխադրվող ձերբակալվածները և կալանավորվածներն ընդունվում են ՁՊՎ-ում սույն կանոնակարգով նախատեսված փաստաթղթերի առկայության դեպքում:

11. Ձերբակալվածները ՁՊՎ ընդունվում են շուրջօրյա: Ոստիկանության տարածքային բաժինների հերթապահը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի հերթապահը) ստուգում է ձերբակալվածներին ընդունելու և պահելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված անձնագրային տվյալների իսկությունը, այնուհետև համապատասխան գրանցում է կատարվում ձերբակալվածների հաշվառման գրանցամատյանում՝ համաձայն N 1 ձևի, և անհատական քարտում՝ համաձայն N 17 ձևի: ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին, կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել ձերբակալվածի ընտրած անձին:

12. ՁՊՎ բերված անձինք ենթարկվում են սանիտարական մշակման, մատնադրոշմման՝ համաձայն N 3 ձևի, և լուսանկարման:

13. Ճերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ճերբակալվածի անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն N 12 ձևի, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

14. Յուրաքանչյուր ճերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ՝ համաձայն N 18 ձևի, որում ներառվում են ճերբակալման և ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի և անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշմման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը և ճերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր:

15. ՁՊՎ-ի անվտանգությունն ապահովելու նպատակով ՁՊՎ ընդունվող յուրաքանչյուր անձ ենթարկվում է անձնական խուզարկության:

16. Սույն կանոնակարգով արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը ՁՊՎ բացառելու նպատակով վարչակազմի կողմից իրականացվում է ՁՊՎ ընդունվող, ՁՊՎ-ում պահվող անձանց անձնական խուզարկություն: Անձնական խուզարկությունից առաջ ՁՊՎ-ի ծառայողի կողմից առաջարկվում է ինքնական ներկայացնել խուզարկվողի մոտ գտնվող իրերը և առարկաները, իսկ արգելված իրերի կամ առարկաների առկայության դեպքում՝ դրանք ինքնական հանձնել: Ինքնական չհանձնելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով: Անձնական խուզարկությունը կատարվում է անձի պատիվն ու արժանապատվությունը չտուճահարելու սկզբունքով՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը:

17. Արգելվում է անձնական խուզարկություն իրականացնել հակառակ սեռի ներկայացուցչի կողմից կամ նրա ներկայությամբ:

18. ՁՊՎ-ում պահվող անձինք անձնական խուզարկության են ենթարկվում նաև ՁՊՎ-ից ազատվելիս, նրա տարածքից իրավական ցանկացած այլ հիմքով դուրս գալիս, տեսակցությունից, պաշտպանի հետ հանդիպելուց և զբոսանքից առաջ և հետո:

19. Սույն կանոնակարգի 18-րդ կետում նշված դեպքերում խուզարկվում են նաև խցերը:

20. Ձերբակալվածի անձնական կամ խցի խուզարկության ժամանակ առգրավման ենթակա առարկաներ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն՝ համաձայն N 2 ձևի: Արձանագրությունն ստորագրվում է խուզարկություն կատարող անձի, խուզարկվողի և մասնակիցների կողմից: Խուզարկվողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրությունում կատարվում

է համապատասխան նշում: Արձանագրությունը կցվում է ձերբակալվածի անձնական գործին:

21. ՁՊՎ ընդունված ձերբակալվածների մոտ թողնվում են այն առարկաները, իրերը և սննդամթերքը, որոնք թույլատրվում են պահել նրանց մոտ խցերում՝ սույն կանոնակարգով սահմանված քանակությամբ ու տեսականիով: Առգրավված արգելված առարկաները, իրերը և սննդամթերքն ընդունվում են պահպանության կամ ոչնչացվում են ոստիկանության մարմնի պետի պատճառաբանված որոշման հիման վրա, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

22. Առգրավված դրամը, արժեթղթերը և թանկարժեք իրերն ի պահ են հանձնվում ոստիկանության մարմնի ֆինանսական բաժնի, իսկ անձնական իրերը՝ պահասենյակ: Անձնական փաստաթղթերը, նամակները, ծոցատետրերը, լուսանկարները, առգրավված առարկաները և իրերը, շքանշաններն ու մեդալները, որոնց պատկանելությունը պարզված չէ, փոխանցվում են վարույթն իրականացնող մարմին:

23. Դրամը, արժեթղթերը և թանկարժեք իրերն ընդունելու մասին ֆինանսական բաժնում 2 օրինակից լրացվում է կտրոն, որի մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է ձերբակալվածին, իսկ երկրորդ օրինակը կցվում է նրա անձնական գործին:

24. Անձնական խուզարկության ժամանակ առգրավված սննդամթերքը, դրամը, արժեթղթերը, թանկարժեք իրերն ու առարկաները, վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ կարող են փոխանցվել կամ ձերբակալվածի հաշվին ուղարկվել վերջինիս ազգականներին կամ այլ լիազորված անձանց: Ոգելից խմիչքները, գարեջուրը, խաղաթղթերը և այլ արժեք չներկայացնող արգելված առարկաներ ու իրեր ոչնչացվում են, որի մասին կազմվում է արձանագրություն:

25. Ձերբակալվածի անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բուժզննությունից և սանիտարական մշակումից հետո ոստիկանության մարմնի հերթապահը ձերբակալվածին տեղեկացնում է նրա իրավունքների և պարտականությունների, ՁՊՎ-ի ներքին կանոնակարգի պահանջների և սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցներ, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին, որի փաստը հաստատվում է ձերբակալվածի ստորագրությամբ, համաձայն N 19 ձևի, և կցվում նրա անձնական գործին:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 6

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն

Խոշտանգման փաստով հարուցված քրեական գործերով քննության առավել արդյունավետ կազմակերպման մասին

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից սահմանված խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման պահանջների կատարումն ապահովելու նպատակով և ղեկավարվելով «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողներին

Հանձնարարում եմ՝

1. Խոշտանգման վերաբերյալ հաղորդումների նկատմամբ դրսևորել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի պահանջներով պայմանավորված առանձնահատուկ մոտեցում՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում անհապաղ հարուցելով քրեական գործ՝ կատարելով լրիվ, բազմակողմանի, անաչառ նախաքննություն և խիստ կարևորելով քրեական գործով անհետաձգելի քննչական

գործողությունները հնարավորինս սեղմ ժամկետում կատարելու անհրաժեշտությունը:

2. Քննչական խումբ կազմելու դեպքում քննչական խմբի կազմում չներգրավել ՀՀ այն իրավապահ մարմինների քննիչներին, որտեղ ծառայել կամ ծառայում է ենթադրյալ խոշտանգում կատարած անձը:

3. Հարուցված քրեական գործերի շրջանակներում անհրաժեշտության դեպքում նշանակել դատաբժշկական և (կամ) դատահոգեբանական փորձաքննություն՝ տուժողի նկատմամբ բռնություն գործադրելու կամ հոգեկան տառապանք պատճառելու փաստը պարզելու համար, իսկ գործով բացահայտման ենթակա հանգամանքների մասին տուժողի ընկալելու վերաբերյալ կասկած առաջանալու դեպքում նշանակել նաև դատահոգեբուժական փորձաքննություն:

4. Սեղմ ժամկետում քննարկել ենթադրյալ խոշտանգում կատարած կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը օրենքով սահմանված կարգով ժամանակավոր դադարեցնելու հարցը:

5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-99.1-րդ հոդվածներով նախատեսված դատավարության մասնակիցների, այդ թվում նաև՝ տուժողի նկատմամբ ձեռնարկել համապատասխան պաշտպանության միջոցներ:

6. ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալներին.

1) Առանձին հաշվառման ենթարկել խոշտանգման վերաբերյալ դեպքերը, դրանց քննության ընթացքը:

2) Յուրաքանչյուր կիսամյակ ամփոփել այս բնույթի հանցագործությունների քննության արդյունքները, առաջարկներ ներկայացնել քննության որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև այս բնույթի հանցագործությունների կատարման պատճառների ու նպաստող

պայմանների վերացմանն ուղղված միջոցների մշակման և կանխարգելման մասին:

7. ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավարին՝ հանձնարարականը ծանոթացնել Հատուկ քննչական ծառայության ծառայողներին:

8. ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալներին՝ վերահսկողություն իրականացնել հանձնարարականի կատարման նկատմամբ:

***Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝***

Վ.Շահինյան

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում